

ՀԱՅ-ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ  
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ 9-ՐԴ ԴԱՐԻ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՄԻՆ\*

**Բանալի բառեր** – Քաղկեդոնի ժողով, միաբնակություն, Ջաքարիա Ա Ձագեցի, Կոստանդնուպոլսի Փոտ պատրիարք, Աշոտ Ա Բագրատունի, Սահակ Ապիկուրեշ (Մռուտ), դավանաբանական թղթակցություն, Շիրակավանի եկեղեցաժողով, եկեղեցական միություն, նեստորականություն, բյուզանդական եկեղեցի:

Մուտք

9-րդ դարում «երկրորդ շնչառություն» ստացած Բյուզանդական կայսրությունը Հայաստանի նվաճման վաղեմի ծրագիրը վերստին ներառում է իր քաղաքական օրակարգ: Բյուզանդիայի նվաճողական քաղաքականության իրականացման գործում մեծ դերակատարում ունեւր կայսերականացված եկեղեցին՝ որպես ազդեցիկ հոգևոր ինստիտուտ: Կայսրությունը խաղարկում է հայ և հույն եկեղեցիների միության ավանդական խաղաքարտը, որով էլ Ջաքարիա կաթողիկոսի աթոռակալության (855-876) շրջանում դրվում է հայ-բյուզանդական եկեղեցական հակամարտության նոր շրջափուլի սկիզբը: Դրա բովանդակությունը գերազանցապես արտացոլված է հոգևոր առաջնորդների դավանաբանական թղթակցություններում<sup>1</sup>:

Հայոց եկեղեցուն բյուզանդական քաղկեդոնիկ եկեղեցու դավանանքը պարտադրելու համար ստեղծվել էին նպաստավոր պայմաններ: Մասնավորապես տակավին 8-րդ դարում հակաարաբական ձախողված ապստամբություններից հետո մեծ թվով հայ իշխաններ գաղթում են բյուզան-

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 14.02.2021:

1 Հայ-բյուզանդական եկեղեցական նամակագրությունը շարունակվել է նաև 10-րդ դարում: Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսը նամակներ է ուղարկել Հայոց կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցուն (898-929) և Սմբատ Ա-ին (890-914): Տե՛ս **Քարթիկյան Հ.**, Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսի 101-րդ և 139-րդ թղթերը՝ ուղղված Հովհաննես Դրասխանակերտցուն և Սմբատ Ա թագավորին, «ՊԲՀ», 1966, N 4, էջ 251-256): X դարի վերջին քառորդին թղթակցել են Հայոց կաթողիկոս Խաչիկ Ա Արշարունին (973-992), Սեբաստիայի ու Մելիտինեի հույն մետրոպոլիտները: Տե՛ս **Ստեփանոս Տարանեցի Ասողիկ**, Պատմութիւն տիեզերական, «Մատենագիրք հայոց», ԺԵ. հատոր, Ժ. դար, Պատմագրութիւն, գիրք Բ., Անթիլիաս-Լիբանան, 2010, Հանդես Գ., Գլ. ԻԱ., էջ 770-800; «Գիրք թղթոց», Թիֆլիս, հրատ. Տ. Ռոտինեանց և Մ. Շարածե, 1901, էջ 302-322; **Ալեքսանյան Վ.**, Խաչիկ Ա Արշարունի կաթողիկոսի աթոռակալությունը և հայ-բյուզանդական եկեղեցական հակամարտությունը 10-րդ դարի վերջին քառորդին, «ՎԷՄ» հանդես, 2020, N 3 էջ 77-85):

ՎԷՄ համահայկական հանդես, ԺԳ (ԺԹ) տարի, թիվ 2 (74), ապրիլ-հունիս, 2021

դական տիրապետության տակ գտնվող տարածքներ և հիմնում հայաժողովուրդներ<sup>2</sup>: Հայրենիքից ու սեփական եկեղեցուց կտրված հայությունը հոգևոր թեմերի բացակայության պայմաններում<sup>3</sup> ընդունում էր հունադավանություն, կորցնում ազգային դիմագիծը և ականա դառնում Բյուզանդիայի զավթողական քաղաքականության աջակիցը:

## 1. Կոստանդնուպոլսի Փոտ պատրիարքի և Զաքարիա կաթողիկոսի թղթակցությունը

9-րդ դարի երկրորդ կեսին Բյուզանդական կայսրության նվաճողական ձգտումների մարմնավորումը դառնում է հունական եկեղեցու խոշորագույն գործիչ, Կոստանդնուպոլսի Փոտ պատրիարքը (858-867, 877-886)<sup>4</sup>: Զանազան մեքենայություններով և խարդավանքներով հասնելով հոգևոր բարձրագույն իշխանության՝ փառամոլ գործիչը ձեռնոց է նետում Հռոմի աթոռին և հայտարարում Արևելքի քրիստոնյա աշխարհը առաջնորդելու իր մտադրության մասին: Փոտ պատրիարքի հավակնոտ նպատակները այն աստիճանի են լարում հարաբերությունները Հռոմի եկեղեցու և Կոստանդնուպոլսի պատրիարքության միջև, որ հանգեցնում են դրանց խզմանը (սքիզմա)<sup>5</sup>: Հավակնոտ առաջնորդը ջանում է ընդդեմ Հռոմի Նիկոլայոս Ա Պապի (858-867) ձևավորել Արևելքի քրիստոնյա երկրների դաշնակցություն: Այդ նպատակով նա նամակներ է հղում Արևելքի հոգևոր առաջնորդներին: Քանի որ Հայոց եկեղեցին որևէ պատրիարքության չէր պատկանում, ուստի նրա առաջնորդին գրում է առանձին նամակ<sup>6</sup>: Հայերի նկատմամբ Փոտ պատրիարքի հատուկ մոտեցումը վկայում է Հայաստանի ու «նրա մշակույթի հանդեպ հելլենացած գործչի ցուցաբերած իմացության և կապի մասին»<sup>7</sup>: Ուստի վայելելով Կոստանդնուպոլսի հայ գործիչների

2 Տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 6, Բյուզանդական աղբյուրներ, Բ, Կոստանդին Ծիրանածին, թարգմ. քննադից, առաջաբան և ծանոթ. Հ. Բարթիկյանի, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970, էջ VIII:

3 Կայսրության տարբեր շրջաններում հայոց եկեղեցու հոգևոր թեմեր հիմնադրվել են միայն 10-րդ դարի վերջերին Խաչիկ Ա Արչարունու օրոք (973-992): Տե՛ս Ալեքսանյան Վ., նշվ. հոդվ., էջ 76-77:

4 Փոտ պատրիարքը հունական եկեղեցու ականավոր դեմքերից է, 9-րդ դարի նշանավոր գիտնական, աստվածաբան: Նրա մայրը Իրեմեն, ազգությամբ հայ էր, Արչավիր Կամսարականի քույրը: Տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 15, Բյուզանդական աղբյուրներ, 5, Թեոփանեսի շարունակող, թարգմ. քննադից, առաջաբան և ծանոթ. Հ. Բարթիկյանի, Եր., ԶՍՀ ԳԱ հրատ., 1990, էջ 104; Ադոնց Ն., Մամիկոնյան իշխանուհին բյուզանդական գահի վրա, Երկեր, հատ. Ա, Եր., ԵՊՀ հրատ., 2006, էջ 285: Կ. Պոլսի պատրիարք Իզնատիոսից հետո՝ 858 թ., խարդավանքներով ու բանասարկություններով գահ է բարձրանում Փոտը: Այդ ժամանակ նա աշխարհիկ անձնավորություն էր, Միքայել Գ կայսեր (842-867) արքունիքի դիվանագիտիկը: Վեց օրվա ընթացքում ստանալով եկեղեցական բոլոր աստիճանները՝ հայտնվում է Բյուզանդիայի հոգևոր հիերարխիայի գագաթին: Փոտը պատրիարքությունը վարել է երկու ժամանակահատված՝ 858-867 և 877-886 թթ.: Նա վայելում էր Բյուզանդիայի այդ ժամանակի ամենաազդեցիկ գործիչ Կարո Մամիկոնյանի հովանավորությունը: Տե՛ս Ադոնց Ն., Կարո Մամիկոնյան (856-866), Երկեր, հատ. Ա, Եր., ԵՊՀ հրատ., 2006, էջ 386: Զարմանալի զուգահեյություններ գրեթե նույն ժամանակ հայ և հույն եկեղեցիների գլուխ են կանգնում եկեղեցական կարգ չունեցող, բայց օժտված աշխարհիկ անձնավորություններ:

5 Փոտ պատրիարքը 867 թ. վճռականորեն մերժեց Հռոմի պապի առաջնությունը: Տե՛ս Բարթիկյան Հ., «Ղաշանց թուրք». կազմը, ստեղծման ժամանակը, հեղինակն ու նպատակը, «ՊԲՀ», 2004, N 2, էջ 78:

6 Տե՛ս Անանեան Պ., Փոտ պատրիարքի թղթակցությունը հայոց հետ, «Բազմավեպ», 1988, N 1-4, էջ 18:

7 Մուրադյան Պ., Հայոց դպրությունը Կոստանդնուպոլսում (V-X դարեր), «ՊԲՀ», 1998, N 1-2, էջ 153:

քաղաքական, ռազմական և մշակութային աջակցությունը՝ Փոտ պատրիարքը ձեռնամուխ է լինում հայ-բյուզանդական եկեղեցական միության իրագործմանը: Եկեղեցիների միության գլխավոր նախապայմանը Հայ եկեղեցու կողմից Քաղկեդոնի ժողովի՝ որպես տիեզերական սուրբ ժողովի ճանաչումը և նրա երկաթնակության բանաձևի ընդունումն էր: Փոտ պատրիարքի առաջարկած «Հաւատոյ միաբանութիւն»-ը ոչ այլ ինչ էր, եթե ոչ Հայ եկեղեցու ինքնուրույնության վերացում՝ բյուզանդական եկեղեցուց կախվածության մեջ ընկնելու ճանապարհով:

Բայց Փոտ պատրիարքի նամակները մարտահրավեր էին ոչ միայն Հայ եկեղեցուն, այլև Հայաստանի քաղաքական իշխանությանը: Մարտահրավերը պահանջում էր պատասխան, որի արժանապատիվ տարբերակը սեփական հավատն ու հոգևոր արժեքները փաստարկված պաշտպանելու պատրաստականությունն էր:

Փոտ պատրիարքի մարտավարական գործիքներից էին կայսրության տարբեր շրջաններում բնակվող հայերի կրոնական հալածանքները, զանազան հնարքներով նրանց երկաթնակություն պարտադրելը: Հայ հոգևորականներին ստորացնում և վիրավորում էին այնպես, ինչպես հերետիկոսներին, պիտակավորում նախատական «ծանծալիկեանս» բնորոշումով, որը բացահայտ ակնարկ էր նրանց՝ Հակովբ Բարադեոսի կամ Ծանծաղոսի հետևորդներ լինելու մասին<sup>8</sup>: Այս գործողությունները վիրավորում էին հայերի կրոնական զգացումները, սահմանափակում նրանց դավանական ազատությունը: Ինչպես հաղորդում է հայր Միքայել Չամչյանը, իր հայրենակիցներին պաշտպանելու նպատակով Ջաքարիա Ա Չագեցի կաթողիկոսը Փոտ պատրիարքին գրում է «թուրթ սիրոյ»՝ ակնկալելով իրավիճակի բարելավում: Միաժամանակ խնդրում է որոշ պարզաբանում Քաղկեդոնի ժողովի վերաբերյալ՝ ասելով, որ «մեք այլազգ լուեալ ենք զժողովոյն Քաղկեդոնի՝ իբր հակառակ երից նախընթաց ժողովոց»<sup>9</sup>: Ջաքարիա կաթողիկոսը վստահեցնում է, որ «հայք համաձայն են ի վարդապետութիւնս հաւատոյ ընդ այլ ուղղափառ եկեղեցիս»<sup>10</sup>: Տարընթերցումների տեղիք չտալու համար նա բացահայտ ներկայացնում է հայերի մերժողական դիրքորոշումը Հակոբ Ծանծաղոսի, Հուլիանոսի, Պետրոս Անտիոքացու, Եվտիքեսի ուսմունքների նկատմամբ, հայտարարում, որ իրենք Գրիգոր Լուսա-

8 Տե՛ս **Չամչյան Մ.**, Հայոց պատմություն, հատ. Բ, Եր., ԵՊ հրատ., 1984, էջ 681: Տե՛ս **Մխիթարեան Ա.**, Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցոյ, Վաղարշապատ, տպ. Ս. Էջմիածնի, 1874, էջ 101: Հակոբ Բարադեոսը (542-578) Շղեախի եպիսկոպոսն էր, հաստատել է ասորական նոր ինքնուրույն եկեղեցական նվիրապետություն: Քաղկեդոնի ժողովը և նեստորականությունը մերժած ասորիների հոգևոր առաջնորդն էր: Տե՛ս **Տէր-Մինասեանց Ե.**, Հայոց եկեղեցու յարաբերութիւնները ասորոց եկեղեցիների հետ, Ս. Էջմիածին, տպ. Սայր Վթոռոյ, 1908, էջ 233: «Քրիստոնյա Հայաստան. հանրագիտարան», Եր., 2002, էջ 86:

9 **Չամչյան Մ.**, նշվ. աշխ., հատ. Բ, էջ 681:

10 Նույն տեղում: Խնդրահարույց է Մ. Չամչյանի պնդումը, թե Փոտ պատրիարքի նամակը ընթերցելով՝ Ջաքարիա կաթողիկոսը զարմանքով հայտնում է, որ բազմաթիվ հայ հոգևորականներ մինչ այժմ անտեղյակ են Քաղկեդոնի ժողովի որոշումներին: Տե՛ս **Չամչյան Մ.**, նշվ. աշխ., էջ 685:

վորչի վարդապետության հետևորդներն են<sup>11</sup>: Քննվող ժամանակաշրջանին մերձ մատենագրական սկզբնաղբյուրներում Զաքարիա կաթողիկոսի հիշյալ նամակի մասին վկայություններ չեն պահպանվել: Սակայն կարելի է ասել, որ այս կապակցությամբ Միքայել Չանչյանի հաղորդած փաստերը մտացածին չեն, քանի որ դրանց հիշատակումներ կան հետագա մատենագրություններում: Մասնավորապես Վարդան Արևելցու շարադրանքից ենթադրելի է, որ Փոտ պատրիարքի ուղարկած գրությունը պատասխանն էր Զաքարիա կաթողիկոսի «հարցմանն» այն բանի, «թե վասն էր եղև չորրորդ ժողովն»<sup>12</sup>: Սկսված թղթակցությունը, անշուշտ, երկար շարք է կազմել, ինչն ուղղակիորեն փաստում է Փոտ պատրիարքը իշխանաց իշխան Աշոտ Բագրատունուն ավելի ուշ հղած նամակում. «**Բագուն անգամ գրեցաք** յառաջնորդդ ձեր եւ քահանայապետդ յոլովակի բանիք»<sup>13</sup> (ընդգծումը մերն է – Վ. Ա.): Ցավոք, ոչ բոլոր գրություններն են պահպանվել:

Զաքարիա Չագեցուն ուղղված Փոտ պատրիարքի նամակը պահպանվել է միայն հայերեն բնագրով<sup>14</sup>: Այդ գրությունից ծավալուն քաղվածք է կատարել Վարդան վարդապետը: Պատմիչը թվարկում է Փոտ պատրիարքի հիշատակած եկեղեցական ժողովները, դրանց գլխավոր մասնակիցներին և խոսքն ամփոփում «Այստքիկ ի թղթոյն Փոտայ սակաւ ինչ գրեցաւ»<sup>15</sup> համառոտ ձևակերպումով: Նամակում առկա փաստական և ժամանակագրական բազմաթիվ անձշտություններ առիթ են տվել որոշ ուսումնասիրողների պնդելու, որ նամակը գիտնական պատրիարքի գրչին չի պատկանում<sup>16</sup>: Այլ վավերագրերի հետ բաղդատությունը ցույց է տալիս, որ նամա-

11 Տե՛ս նույն տեղում:

12 Հաւաքումն պատմութեան **Վարդանայ վարդապետի**, էջ 82: Ֆրանսիացի բյուզանդագետ ժան Ղառուգեի կարծիքով՝ այս նամակը Փոտ պատրիարքի պատասխանն է Զաքարիա կաթողիկոսին: Տե՛ս **Darrouzes J.**, Deux lettres inedites de Photius aux Armeniens, «Revue des etudes Byzantines», t. XXIX, Paris, 1971, էջ 138: Մանրակրկիտ քննության ենթարկելով նամակի գրության շարժառիթը Մխիթարյան միաբան Պ. Անանյանը եզրակացնում է, որ նամակագրությունը նախածեղեն է Փոտ պատրիարքը: Զաքարիա կաթողիկոսի նամակի այն միտքը, որը հայերը չեն հետևում Հակոբոս Ծանծաղոսի, Հովիհանոսի, Պետրոս Անտիոքացու և Եվտիմեոսի ուսմունքներին, ավելի շատ նախապես հնչեցված մեղադրանքը հերքելու նպատակ ունեն: Տե՛ս **Անանյան Պ.**, նշվ. հոդվ., էջ 17-18: Խիստ վիճահարուց տեսակետ է հայտնում ֆրանսիացի պատմաբան Ռ. Գրոսսեն. Աշոտ Բագրատունին, 862 թվականին խալիֆից ստանալով իշխանաց իշխանի տիտղոս, դիմում է Բյուզանդիայի կայսրին՝ հաստատելու իր կարգավիճակը, միաժամանակ հայտնում է հայերի դավանանքային հավատարմության մասին: Օգտվելով պատեն առիթից՝ բյուզանդական արքունիքը Փոտ պատրիարքի միջոցով հայերին Քաղկեդոնի դավանանքը ընդունելու առաջարկ է անում: Տե՛ս **Grousset. R.**, Histoire de l'Arménie des origines a' 1071, Paris, 1947, էջ 383-385: Հմտ. **Կոզան հ. Ս.**, Հայոց եկեղեցին, Երուսաղէմ, 1963, էջ 275:

13 «Գիրք թղթոց», էջ 281:

14 Նամակը հատվածաբար և թարգմանություններով հրատարակվել է մի քանի անգամ: Առաջին անգամ լույս է տեսել Ա. Մայի կողմից: Տե՛ս **Mai A.**, Spicilegium Romanum X, Romae, 1844: Ապա տեղ է գտել Մինիեի նշանավոր «Հունական հայրաբանություն» շարքում: Տե՛ս Patrologie cursus completus. Series graece, ed. **J. Migne**, 102, էջ 703-714: Թուրք Փաւտայ պատրիարքի առ Զաքարիա կաթողիկոս Հայոց Մեծաց, «Православный Палестинский сборник», т. XI, вып. 1, С. Петербург, 1892, էջ 179-210: Ամբողջական տեքստը տարբեր ձեռագրերի բաղդատությամբ հրատարակել է նշանավոր հայագետ Ն. Ալինյանը: Տե՛ս Թուրք Փոտայ պատրիարքի առ Զաքարիա կաթողիկոսի Հայոց Մեծաց, «Հանդես անտօրեայ», Վենետիկ, 1968, N 1-3, էջ 65-100, N 4-6, էջ 129-156 (այսուհետ՝ Թուրք Փոտայ պատրիարքի....):

15 Հաւաքումն պատմութեան **Վարդանայ վարդապետի**, էջ 82-85:

16 Տեսալետ կա, որ նամակի հեղինակը Փոտ պատրիարքի պատվիրակ Վահան-Հովհան արքեպիսկոպոսն է կամ Հայաստանի քաղկեդոնական համայնքի որևէ ներկայացուցիչ: Տե՛ս **Арутюнова-Фиданян В.**, Polemika между халкедонитами и монофизитами и переписка патриарха Фотия, «Вестник Православного Свято-Тихоновского гуманитарного университета», I Богословие, Философия, вып. 2, М., 2010, էջ 30-31: Տե՛ս նաև **Ըստկարեան Վ.**, Եկեղեցական պատմութիւն, Վիեննա, տպ. Մխիթարեանց, 1872, էջ 195):

կի բովանդակությունը քաղված է միջնադարյան հայերեն մի բնագրից, որը չի պահպանվել<sup>17</sup>:

Փոտ պատրիարքի նամակն ունի փոքրիկ հիշատակարան, որի հեղինակը Հայաստանի իրերի դրությանը լավատեղյակ հայ է, ամենայն հավանականությամբ, նա նաև նամակի թարգմանիչն է<sup>18</sup>: Հիշատակարանը պարունակում է կարևոր տեղեկություններ նամակի կազմման թվականի, նամակաբերի ինքնության և գրության նպատակի վերաբերյալ: Հիշատակարանի բարեխիղճ հեղինակը իրազեկում է, որ խնդրո առարկա նամակը Պոլսո առաջնորդը ուղարկել է իր պատրիարքության առաջին շրջանում (858-867) բարձր եկեղեցական կարգ ունեցող հայագգի հոգևորականի միջոցով. «ՅԺԱ (862) թուականութեան Հայոց, առաքեաց Փոտ Կոստանդնուպոլսոյ Հայրապետն՝ զՎահան Նիկիոյ արքեպիսկոպոս ի հայս, առ Զաքարիա Հայոց Մեծաց կաթողիկոս՝ վասն հաւատոյ միաբանութեան»<sup>19</sup>:

«Թուղթը» բարձրաստիճան հոգևորականի միջոցով առաքելով՝ հեռատես եկեղեցապետը ավելի ազդեցիկ էր դարձնում իր «ուղերձը», շեշտում նպատակի կարևորությունը: Նամակաբերը դավանափոխ եպիսկոպոս Վահան Տարոնացին էր, որը որոշիչ դեր ուներ պատրիարքի ու հայ հոգևորականության հարաբերություններում: Նա նաև Փոտ պատրիարքի խորհրդատուն էր հայկական գործերում<sup>20</sup>: Ընդունելով քաղկեդոնականություն՝ Վահանը վերցրել էր Հովհաննես անունը և ստացել Նիկեի աթոռը<sup>21</sup>: Վահանը ժամանել էր «որպէս զի բերան ի բերան խօսելով՝ այս Հայոց և Յունաց մէջ հակառակութեան խնդիրը լաւ պարզէ եւ իմացընէ»<sup>22</sup>: Նրան էր հանձնարարված նաև նամակի բովանդակության վերաբերյալ լրացուցիչ բացատրություններ և մեկնաբանություններ տալու գործը:

17 Stéu **Garitte G.**, La narratio de rebus Armeniae, edition critique et commentaire, Corpus Scriptorum christianorum Orientalium, Vol. 132, Louvain, 1952, էջ 379: Փոտ պատրիարքի թղթի ներածությունում շարադրված փաստերը ակնառու նմանություն ունեն «Narratio de rebus Armeniae» վավերագրի պարունակած փաստերին: Տե՛ս **Բարթիկյան Հ.**, «Narratio de rebus Armeniae» հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուր, «Բանբեր Մատենադարանի», 1962, N 6, էջ 460-470:

18 Տե՛ս **Անանեան Պ.**, նշվ. հոդվ., մաս երկրորդ, 1989, N 1-4, էջ 38:

19 Վահանյայ Նիկիայ եպիսկոպոսի բանք, «Հանդես ամսօրեայ» 1968, N 7-9, սյունակ 258 (այսուհետ՝ Վահանյայ Նիկիայ եպիսկոպոսի բանք): Ամենայն հավանականությամբ, նույն հիշատակարանից օգտվել է նաև Վարդան Արևելցին, ավայն ամհասկանալիորեն նրա տեղեկությունները համերաշխ չեն հիշատակարանում արձանագրված փաստերին: Վարդան վարդապետը հաղորդում է, որ «առաքեաց Փոտ պատրիարզն Կոստանդնուպոլսի յերեթհարիւր ութսուտան թուականին (869) զՅոհան մետրապօլիտն Նիկիոյ»: Տե՛ս Հաւաքունս պատմութեան **Վարդանայ վարդապետի**, էջ 82: Պատմիչի հիշատակած 869 թվականը ընդունելի չէ, քանի որ 867-877 թվականներին Փոտը աթոռագրուել էր: Մ. Օրմանյանը խոստովանում է, որ ինքը Փոտ պատրիարքի թղթի բնագրին ծանոթ չէ, բայց կարծում է, որ նամակագրությունը տեղի է ունեցել 864-867 թվականներին: Տե՛ս **Օրմանյան Մ.**, նշվ. աշխ., § 669, սյունակ 1136:

20 Տե՛ս **Աղոնց Ն.**, Վասիլ Ա կայսեր տարիքն ու ծագումը (867-886), Երկեր, հատ . Ե, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 162:

21 Նամակաբերի Վահան-Հովհան կրկնանունների միջև Մ. Չամչյանը տարբերություն չի տեսնում, պարզաբանում է, որ Վահանին հույները Հովհան էին կոչում: Նա հունադավան հայ էր: Տե՛ս **Չամչյան Մ.**, նշվ. աշխ., էջ 685: Մ. Օրմանյանը չի ընդունում Հովհանին Վահան վերանվանելը և նրա ազգությամբ հայ լինելը: Տե՛ս **Օրմանյան Մ.**, նշվ. աշխ., § 670, սյունակ 1138: Զաքարիա կաթողիկոսի պատվերով Վահանը աշխատություն է գրել Մանդյան և Մկրտության տոների մասին: Տե՛ս **Աղոնց Ն.**, Վասիլ Ա կայսեր տարիքն ու ծագումը (867-886), էջ 162; **Յովսեփյան Պ.**, Յիշատակարանք ձեռագրաց, հատ. Ա, Անթիլիաս, տպ. Կաթողիկոսութեան Կիլիկիոյ, 1951, էջ 695:

22 **Ալիշան Ղ.**, Յուշիկք հայրենեաց հայոց, հատ. Ա, Վենետիկ, 1869, էջ 457:

Պոլստ քահանայապետը երկարաշունչ նամակը սկսում է մեծարանքի ողջունագրով: Ջաքարիա կաթողիկոսին ուղղված գովեստի շոայլ խոսքերը վկայում են, որ նա ծանոթ է Հայոց հովվապետի բարի համբավին. «Յաւերժահրաշից արանց յոգնապատիւ հռչակաւոր եւ բոցափայլեալ ամենայն զանազան փառաւորութեամբ»: Կաթողիկոսին դիմում է իբրև «զմեծի առաքելոյն Թադէոսի և զամեներջանիկ սրբոյն Գրիգորի» աթոռի ժառանգորդի՝ նրան անվանելով «վերատեսուչ հիւսիսական ազիւնդ եւ հովուապետ Ազքանազեան զաւրացոյ»<sup>23</sup>: Փառատենչ եկեղեցապետը նախախոսքում չի մոռանում շեշտել պարգոյթյան մեջ ազդեցիկ իր տիտղոսը. «Փոստ արքեպիսկոպոս Կոստանդինուպոլսի, Նոր Հռոմայ»<sup>24</sup>:

Անցնելով բուն նյութին՝ աստվածաբան պատրիարքը «դիմում է հարձակման», ձգտում հիմնավորելու Քաղկեդոնի տիեզերաժողովի ընդունած «հաւատոյ բանաձեւը», միաբնակությունը ճանաչում հերձված: Ցույց տալով իր տեղեկացվածությունը Քաղկեդոնի ժողովին հայերի չմասնակցելու պատճառների վերաբերյալ՝ ջանում է ապացուցել, որ Հայ եկեղեցին դարերի ընթացքում ընդունել է Քաղկեդոնի ժողովը, մինչև անգամ հերքելով Քաղկեդոնի ժողովը՝ հայերը կապ են ունեցել հունական եկեղեցու հետ: «Փաստերով զինված» առաջնորդը փորձում է համոզել, որ «հակառակութիւն վասն ժողովոյն (Քաղկեդոնի - Վ. Ա.) ինչ ոչ գոյր ի Հայք. այլ ամենքեան ընդունէին զժողովն մինչեւ ի ժողովն Դունայ»<sup>25</sup>, որը գումարվել է 554 թվականին Ներսես Բ կաթողիկոսի օրոք: Պնդում է, որ թեև Դվինի ժողովում մերժվել է քաղկեդոնականությունը, սակայն շատ չանցած՝ Մովսես Եղիվարդեցի կաթողիկոսի օրոք (574-604), հայոց 21 եպիսկոպոսների մասնակցությամբ Պոլսում ժողով է գումարվել «եւ բացաքննեալ դարձեալ Հայք ընկալան զժողովն Քաղկեդոնի»<sup>26</sup>: Նամակի հաջորդ հատվածում հեղինակը հիշեցնում է, որ Հայոց կաթողիկոս Եզր Փառաժնակերտցու (630-641) և բազմաթիվ այլ եպիսկոպոսների մասնակցությամբ Հերակլ կայսրը (610-641) «երեսնաւրեայ ժամանակաւք» ժողով է գումարել Կարինում, որտեղ «դարձեալ հաւանեցան Հայք կամաւ եւ ոչ բռնութեամբ. եւ ընկալան զժողովն Քաղկեդոնի»<sup>27</sup>: Ընդունում է, որ 726 թվականին Հովհան Ծննցու

23 Թուղթ Փաւտայ պատրիարքի առ Ջաքարիա կաթողիկոս Հայոց Մեծաց, «Православный Палестинский сборник», էջ 180: Թուղթ Փոտայ պատրիարքի..., N 1-3, էջ 65-66: **Չամչյան Մ.**, նշվ. աշխ., էջ 682:

24 Թուղթ Փաւտայ պատրիարքի առ Ջաքարիա կաթողիկոս Հայոց Մեծաց, «Православный Палестинский сборник», էջ 180: Թուղթ Փոտայ պատրիարքի..., N 1-3, էջ 65-66: **Չամչյան Մ.**, նշվ. աշխ., էջ 682:

25 Թուղթ Փոտայ պատրիարքի..., N 1-3, էջ 67-68:

26 Նույն տեղում, էջ 69-70: Կայսր Մորիզը 591 թ. ժողով է գումարում Կոստանդնուպոլսում, որտեղ Մովսես Եղիվարդեցու առջև քաղկեդոնականությունը ընդունելու պահանջ են դնում: Սակայն պահանջը մերժվում է, որից հետո կայսրը Հայաստանի բյուզանդական մասում Ավանում, հակաթոռ կաթողիկոս է նշանակում Հովհաննես Բագարանցուն (591-611): Սեբեոսը այս մասին խոսում է առանց Պոլսում տեղի ունեցած ժողովի մասին հիշելու: Տե՛ս **Սեբեոս**, Պատմութիւն ի Հերակլն, աշխատ. **Ազգայան Գ.**, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ. 1979, էջ 91:

27 Թուղթ Փոտայ պատրիարքի..., N 1-3, էջ 69-72:

գումարած «ի ժողովն Մանձկերտի» Հայ եկեղեցին սահմանազատվել է երկարնակությունից<sup>28</sup>:

## 2. Շիրակավանի եկեղեցական ժողովը

Կայսերական եկեղեցու առաջարկությունների «փաթեթը» քննելու և դիրքորոշում հայտնելու նպատակով Զաքարիա Չագեցին 862 թվականին «արար ժողով ի Շիրակաւան եպիսկոպոսաց բազմաց եւ կրանաւորաց»<sup>29</sup>: Ժողովը տեղի է ունեցել «առաջի Աշտոյ Հայոց սպարապետին» և ունեցել է զուտ դավանաբանական օրակարգ<sup>30</sup>: Սպարապետն այդտեղ է գտնվել իր մարտական պատրաստության բերած զորքով «վասն ապստամբելոց ումանց յելուզակաց առ եզերք գետոյն հզաւրի, որ կոչի Կուր»<sup>31</sup>: Ժողովին մասնակցում էր նաև Նանա Ասորին՝ «սարկաւագ մեծ եւ հռչակաւոր փիլիսոփայ»<sup>32</sup>: Ժողովի մասնակից «եպիսկոպոսաց բազմաց եւ կրանաւորաց» անվանացանկը չի պահպանվել: Պ. Անանյանը կարծում է, որ ժողովի մասնակիցների թվում է եղել նաև Սևանավանքի առաջնորդ, ապագա Հայոց կաթողիկոս Մաշտոց Եղիվարդեցին (897–898)<sup>33</sup>: Ենթադրվում է, որ ժողովին մասնակցել են տարբեր «թևերի» ներկայացուցիչներ, այդ թվում՝ քաղկեդոնական դավանանքը պաշտպանող հայ հոգևոր գործիչներ:

Ժողովի կենտրոնական դեմքը Վահանն էր՝ Նիկիայի արքեպիսկոպոս: Ակներև է, որ վերջինս ստանձնել էր Փոստ պատրիարքի առաջարկած «բարեփոխումները» հայ հոգևորականներին ընդունել տալու հանձնառություն: Ժողովում նա դավանաբանական բովանդակությամբ ընդարձակ

28 Տես նույն տեղում, էջ 71-72:

29 Վահանայ Նիկիայ եպիսկոպոսի բանք, էջ 258: Հուաքունն պատմութեան **Վարդանայ վարդապետի**, էջ 82: Ժողովը տեղի է ունեցել 862 թ. ապրիլի 25-ից մինչև 863 թ. ապրիլի 24-ն ընկած ժամանակահատվածում: Տես **Dorfmann Lazarev I.**, *Arme' niens et byzantins a l'epoque de Photius: deux de 'bats theologiques apre's le triomphe de l'orthodoxie*, Peeters, 2004, էջ 56: Ռուսաստանահայ պատմաբան Արուսյունովա-Ֆիդանյանի կարծիքով Շիրակավանի «փաստաթղթերը» ստեղծել են քաղկեդոնիկ հայերը, իսկ եկեղեցաժողով, որպես այդպիսին, չի եղել: Տես **Арутюнова-Фиданян В.**, նշվ աշխ., էջ 31:

30 Այս տեսակետը ամրապնդվում է պատմաբան Վ. Հակոբյանի վկայակոչած «Հուաքունն բանից նախնեաց» վերնագրով ձեռագրի տեղեկությամբ, որի երկրորդ փաստաթղթի վերջում գրված է, որ Շիրակավանի ժողովը «գումարեցաւ յաղագս քննութեան հաւատոց»: Տես **Հակոբյան Վ.**, Մանր ժամանակագրություններ XIII-XVIII, հատ. Բ, Եր., ՀՍՍՌ ԳԱ Իրատ., 1956, էջ 160: Նշելով, որ Շիրակավանի ժողովը տեղի է ունեցել 869 թ. պատմաբան Բ. Առաքելյանը գտնում է, որ ժողովի գլխավոր խնդիրը եղել է Աշոտ Բագրատունու հռչակումը Հայոց թագավոր: Տես **Аракелян Б.**, *Гарни, Ер., изд. АН Армянской ССР, 1951*, էջ 85:

31 **Յովսեփյան Օ.**, նշվ աշխ., էջ 95:

32 Վահանայ Նիկիայ եպիսկոպոսի բանք, էջ 258: Տես նաև Հուաքունն պատմութեան **Վարդանայ վարդապետի**, էջ 82: Ազգությամբ ասորի Նանան սարկավագ էր և գիտնական, նրա անունը Հայաստանում հիշվում է Աշոտ Մապերի ժամանակից (804-826): Վերջինիցս Նանա Ասորին 812-813 թթ. պատվեր է ստանում գրելու Հովհաննեսի Ավետարանի համառոտ մեկնությունը: 813-816 թթ. ընթացքում ասորի հոգևորականը արաբերենով գրում է Ավետարանի մեկնությունը և ընծայում Բագարատ Բագրատունուն: Տես **Ալիմյան Ն.**, Թեոդորոս Ասիկուրա եւ Նանա Ասորի Հայաստանի մեջ եւ Նանայի Յովհաննու մեկնութեան հայերեն թարգմանությունը, Մատենագրական հետազոտություններ, Քննություն և բնագրեր, հատ. Ա, Վիեննա, տպ. Մխիթարեան, 1922, էջ 131-132: Հայաստանում Նանան մինչև իսկ պայքարել է քաղկեդոնական Եպիսկոպոս անունով հույն եպիսկոպոսի դեմ և հաղթել: Տես Հուաքունն պատմութեան **Վարդանայ վարդապետի**, էջ 78: Ալիմյանը հերքում է Նանա Ասորու՝ հայ իշխանների հետ Բաղդադ գերեվարված լինելու՝ Մ. Օրմանյանի ենթադրությունը: Տես **Ալիմյան Ն.**, նշվ աշխ., էջ 129-130:

33 Տես **Անանեան Պ.**, նշվ. հոդվ., .. մաս երկրորդ, 1989, N 1-4, էջ 41:

«զեկույց» է կարդում, լուսաբանում վիճահարույց հարցերը<sup>34</sup>: Հայ հոգևորականների զգացմունքների վրա չազդելու համար Վահան արքեպիսկոպոսը իր ճառի նախաբանում ոչ մի խոսք չի ասում Քաղկեդոնի ժողովի մասին: Դրա փոխարեն խրթին դավանաբանական նյութը «դյուրամարս» դարձնելու համար «հրամցնում է» քրիստոնեական հայրերի երկերից բազմաթիվ քաղվածքներ: Բացատրում է Քրիստոսի՝ «երկու բնություն, մեկ անձ» բանաձևը, որով սուրբ հայրերը «գուղիղ զփրկութեան ճանապարհն աւանդեցին»<sup>35</sup>:

Վահան արքեպիսկոպոսի ճառի բնագրին կից՝ «ԺԵ գլուխք. Նգովից գոր եղեալ է» վերնագրի ներքո, զետեղված է կրոնական 15 թեզից բաղկացած մի շարադրանք: Դավանաբանական բովանդակություն ունեցող 15 կետերը ընդունված ժողովական կանոններ չէին: Դա ավելի ձիշտ Կոստանդնուպոլսից բերված «որոշման նախագիծ» էր, որ պետք է ընդունվեր ժողովականների կողմից<sup>36</sup>: 15 կետերը Պ. Անանյանը գնահատում է որպես «Բիւզանդիոյ եկեղեցիին կողմէն եղած առաջարկը Հայոց՝ իբր համաձայնութեան վաւերաթուղթ, ընդունելի երկու կողմերէն ալ»<sup>37</sup>: Ըստ էության, Շիրակավանում մասնակիցների ստորագրությամբ ժողովական կանոնների փաստաթուղթ չի ընդունվել: Հավանաբար դա է պատճառը, որ սկզբնաղբյուրների գերակշիռ մասը լռությամբ շրջանցում է Շիրակավանի ժողովի փաստը: Հայ մատենագրության մեջ Շիրակավանի ժողովի մասին պահպանվել է ընդամենը երկու հիշատակություն՝ Փոտ պատրիարքի նամակի հիշատակարանում և դրանից օգտված Վարդան Արևելցու երկում:

«ԺԵ գլուխք. Նգովից գոր եղեալ է» վերնագրով շարադրանքի Ա-ԺԲ և ԺԵ կետերը վերահաստատումն են հայոց ուղղադավանության սկզբունքների, որոնք ավանդված են Հայ եկեղեցու հայրերի աշխատություններում: Դրանք վերաբերում են Ս. Երրորդությանը, Աստծո Որդու մարդեղության խորհրդին և համընկնում են Փոտ պատրիարքի պատվիրակ Վահան արքեպիսկոպոսի դավանական առաջարկներին<sup>38</sup>:

Հույն հոգևոր առաջնորդի գլխավոր ուղերձները ամփոփված են ԺԳ և ԺԴ կետերում: Սրանց բովանդակությունը տարբերվում է նյուններից, քանի որ խոսվում է եկեղեցական ավանդության, Քաղկեդոնի ժողովի մա-

34 Վահան եպիսկոպոսի ճառը ամբողջությամբ հրատարակել է Ն. Ալինյանը: Տե՛ս Վահանայ Նիկիայ եպիսկոպոսի բանք, էջ 258-280: Ռուս հեղինակ Ռոսելյինը կարծում է, որ Փոտ պատրիարքի նամակի խմբագիրը Վահան-Հովհանն է նախքան Շիրակավանի ժողովը: Տե՛ս **Ռոսելյին Ֆ.**, Փոտի ջանքերը Հայ եկեղեցին միացնելու Կ. Պոլսոյ կամ Յունական եկեղեցուն, «Արարատ», Էջմիածին, 1918, N 1-3, էջ 52:

35 Վահանայ Նիկիայ եպիսկոպոսի բանք, էջ 279-280:

36 Ս. Օրմանյանը չի ընդունում Շիրակավանում ժողովական կանոնների գոյությունը և 15 կետերը համարում է «յոյն եպիսկոպոսին կողմէ կազմուած տեղեկութիւններ»: Տե՛ս **Օրմանյան Ս.**, նշվ. աշխ., § 670, սյունակ 1139: Պ. Անանյանի կարծիքով՝ 15 կետերը կարելի է համարել Շիրակավանի ժողովի կանոններ: Տե՛ս **Անանեան Պ.**, նշվ. հոդվ., մաս երկրորդ, 1989, N 1-4, էջ 42:

37 **Անանեան Պ.**, նշվ. հոդվ., մաս երկրորդ, 1989, N 1-4, էջ 42:

38 Տե՛ս Վահանայ Նիկիայ եպիսկոպոսի բանք, էջ 262-266: Տե՛ս նաև **Անանեան Պ.**, նշվ. հոդվ., մաս երկրորդ, 1989, N 1-4, էջ 48:



սին<sup>39</sup>: ԺԳ կետով նզովքի են արժանանում Քաղկեդոնի ժողովը ոչ թե խղճի թելադրանքով, այլ «վասն մարդահաճության եւ կան վասն ընչասիրության» ընդունածները: ԺԴ կետով նզովվում են նրանք, ովքեր մերժել են Քաղկեդոնի ժողովը՝ այն ճանաչելով իբրև «ընդ պղծոյն Նեստորի համաձայնեալ»<sup>40</sup>:

Շիրակավանի ժողովում պայքար է եղել հայոց միաբնակության հետևորդների և Քաղկեդոնի ժողովի բանաձևը պաշտպանողների միջև: Վահան արքեպիսկոպոսին հաջողվել է համախոհներ ձեռք բերել հայ հոգևորականների մեջ: Սակայն, այդուհանդերձ, կողմերից որևէ մեկը բացահայտ առավելություն չի ունեցել, այդ պատճառով ԺԳ և ԺԴ կետերը առաջարկվել են որպես փոխզիջումային տարբերակ<sup>41</sup>:

Հայ եկեղեցու «մի բնություն» դավանանքին հավատարիմ հոգևորականները Զաքարիա Չագեցու գլխավորությամբ բավական դիվանագիտորեն են մոտեցել խնդրին: Քաղկեդոնի ժողովի բանաձևի մերժումը պատճառաբանել են այն հիմնավորմամբ, որ «Քաղկեդոնի հանդէպ ունէին նեստորական ըլլալուն համոզումը»<sup>42</sup>: Ժողովին ներկայացված թղթերում ոչ մի խոսք չկա ծիսական տարբերությունների վերացման մասին: Մի բան, որ կարևոր պայման է եղել հայ-բյուզանդական նախորդ և հաջորդ եկեղեցական հարաբերություններում<sup>43</sup>: Բյուզանդացիներին գոհացում տալու համար ժողովը դատապարտում է Եվտիմեոսի ծայրահեղ միաբնակությունը: Սրանով փարատում են Փոստ պատրիարքի ներկայացուցչի տարակույսները Հայ եկեղեցու ուղղադավանության վերաբերյալ: Հայ հոգևորականների զգուշավոր մոտեցումը և Քաղկեդոնի ժողովի բացահայտ ընդունումից խուսափելու պատճառը Մխիթարյան ուխտի միաբան Պ. Անանյանի կարծիքով Քաղկեդոնի ժողովի 28-րդ կանոնն է: Սա սահմանում է Կոստանդնուպոլսի պատրիարքության գերագահություն Արևելքի քրիստոնյաների նկատմամբ: Սրանից բխում է, որ պատրիարքը ստանում է Հայ եկեղեցու հովվապետին Կոստանդնուպոլսում ձեռնադրելու իրավասություն<sup>44</sup>: Կոստանդնուպոլսի աթոռի այս հավակնությունը մի քանի տարի հետո բաց տեքստով ձևակերպում է Նիկողայոս Միստիկոս պատրիարքը (901-907),

39 ԺԳ և ԺԴ կանոնները ցույց տվեցին, որ Շիրակավանի ժողովում հակառակորդ հոսանքների միջև համառ պայքար է եղել: Տե՛ս **Պաճեան Հ.**, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի հայս եւ միութեան նոցա, Վիեննա, տպիխոսութեան, 1878, էջ 25:

40 Վահանայ Նիկիայ եպիսկոպոսի բանք, էջ 265-266:

41 Հմմտ. **Հաղունի Վ.**, Կարեւոր խնդիրներ հայ եկեղեցւոյ պատմութենէն, Վենետիկ, 1927, էջ 479: ԺԳ և ԺԴ կետերի գոյությունը հիմք է տալիս հայր Ս. Կոզյանին եզրակացնելու, որ Շիրակավանի ժողովում վերջապես երկար չարչրկված հարցը լուծվում է «Երկու բնութիւն-Մէկ անձ, եւ ոչ թէ երկու բնութենէ մէկ բնութիւն» բանաձևով, սակայն տարօրինակ կերպով ժողովական հայրերին պաշարած նզովքներն ու անեծքները, թյուրիմացություններն ու գրապարտությունները «արգելք եղան գոյացնելու ցանկալի միաձայնութիւնը»: Տե՛ս **Կոզեան Ս.**, նշվ. աշխ., էջ 279-280:

42 **Անանեան Պ.**, նշվ. հոդվ., մաս երկրորդ, 1989, N 1-4, էջ 61:

43 Տե՛ս **Ռոսելլին Ֆ.**, նշվ. հոդվ., էջ 809-810: Տե՛ս նաև **Անանեան Պ.**, նշվ. հոդվ., մաս երկրորդ, 1989, N 1-4, էջ 57:

44 Տե՛ս **Անանեան Պ.**, նշվ. հոդվ., մաս երկրորդ, 1989, N 1-4, էջ 62:

(912-925) Հայոց թագավոր Սմբատ Ա-ին (890-914) և կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցուն հասցեագրած նամակներում<sup>45</sup>:

Շիրակավանում արձանագրված արդյունքները, որոնք գոհացուցիչ չէին Բյուզանդիայի համար, թելադրված էին նաև աշխարհաքաղաքական իրողություններով: Բյուզանդիայի հետ մերձեցումը բերելու էր հայ-արաբական հարաբերությունների սրմանը և կարող էր խոչընդոտել Հայոց թագավորության վերականգնման գործընթացը: Իսկ հայոց ավագանին շատ լավ հասկանում էր, որ Հայաստանում դրության տերը տակավին խալիֆայությունն էր<sup>46</sup>:

Շիրակավանի ժողովի արդյունքները ընդունելի էին նաև ասորիների համար: Սարկավագ Նանա Ասորին վավերացնում է ժողովի դրույթները՝ փաստագրելով հայ և ասորի եկեղեցիների մերձեցման իրողությունը: Գրիգոր Մագիստրոսի նամակում, որը հասցեագրված է ասորիների պատրիարքին, ասվում է, որ վերջինս գրել է, թե Հայոց Զաքարիա կաթողիկոսի օրոք մեր միջև միություն է հաստատվել. «Այլ վասն միաբանութեան ձերոյ գրեալ է ի յիշատակեալ յաւուրս տեառն Զաքարիայի եւ տեառն Քրիստափորի, եթէ պարտ է մեզ վերստին միաբանել եւ հաստատել զուխտս հարցն»<sup>47</sup>: Այս տեղեկությունը հավաստի է, հետևաբար երկու եկեղեցիների վերստին մերձեցման գործը պետք է վերագրել Նանա սարկավագին՝ որպես ասորիների ներկայացուցչի Հայաստանում<sup>48</sup>:

Փաստեր կան, որ Փոտ պատրիարքին հաջողվել է իր գործակալների միջոցով Հայաստանի որոշ շրջաններում, մասնավորապես Տարնում և մերձակա Չորրորդ Հայքում, ակտիվացնել իր հետևորդներին ու տարածել քաղկեդոնականություն<sup>49</sup>: Հաստատ է, որ այս շրջաններում բավական արդյունավետ է գործել բյուզանդական «հինգերորդ շարապունը»: Սա

45 Կոստանդնուպոլսի պատրիարքը բաց տեքստով Հայոց թագավոր Սմբատ Ա-ին առաջարկում է. «Բեզ մնում է այստեղ ուղարկես աստուծո համաձայնությամբ (առաջադրվելիք) ձեր ապագա քահանայապետին, որպեսզի (նա) ստանա բարեպաշտության առավել ճշգրիտ դավանանքը, լինելով մեզ հետ ինչքան ժամանակ որ նա ցանկանա, ծանոթանա բարեպաշտության հարցերին և եկեղեցական իրավիճակին, որից հետո արժանանալով ձերնադրության, վերադառնա ձեր պայծառափայլ ազնվությանը, ձեր իշխանության լիության»: Տես **Քարթլիկան Հ.**, Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսի 101-րդ և 139-րդ թղթերը՝ ուղղված Հովհաննես Դրասխանակերտցուն և Սմբատ Ա թագավորին, «ՊԲՀ», 1966, N 4, էջ 255-256:

46 Տես **Վարդանյան Վ.**, IX դարի երկրորդ կեսին պետություն և եկեղեցի հարաբերություններին առնչվող խնդիրների շուրջ, «ՊԲՀ», 2003, N 2, էջ 230:

44 Գրիգոր Մագիստրոսի թղթերը, բնագիրն յառաջաբանով եւ ծանօթ. լոյս ընծայեց **Կ. Կոստանեանց**, Աղեքսանդրապոլ, տպ. Գեորգ Մաճոյեանցի, 1910, էջ 163:

48 Տես **Տէր-Մինասեանց Ե.**, նշվ. աշխ., էջ 234:

49 Ֆրանսիացի բյուզանդագետ ժան Դառուզեն հրատարակել է Փոտ պատրիարքի հեղինակած ևս երկու նամակ: Առաջին նամակում, որը վերնագրված է «Ընդդէմ թեոպասիստների աղանդի» (աստվածաշարժարների - Վ. Ա.) Փոտ պատրիարքը հայտնում է, որ փորձել է վերացնել երկու եկեղեցիների միջև եղած դավանաբանական անջրպետը և հասել է որոշակի հաջողությունների: Ըստ նրա՝ իր և իր գործակալ Վահան-Հովհանի ջանքերով հայերի մի մասը ընդունել է քաղկեդոնականություն: Տես **Darrouzes J.**, Deux lettres inedites de Photius aux Armeniens, էջ 140: Մեկ այլ տեղում Փոտ պատրիարքը իր անհայտ հասցեատիրոջը պատմում է Հայոց կաթողիկոս Զաքարիա Զագեցուն և ուղղափառություն ընդունած հայերին դիմելու մասին: Փոտ պատրիարքի ակնարկած ուղղափառ հայերը Չորրորդ Հայքում ապրող տարոնացիներն են: Տես նույն տեղում, էջ 146; **Գրիգորյան Գ.**, Տարնոի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը IX-X դարերում, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983, էջ 115:

պատեհ առիթ էր Բյուզանդիայի համար դավանակիցների շահերը պաշտպանելու քողի տակ ոտնձգություններ կատարելու Տարոնում<sup>50</sup>:

Արձանագրենք, որ Շիրակավանի ժողովում Պոլստ ամենագոր աթոռակալի «հաւատոյ միաբանութեան» ծրագիրը չի ընդունվել, քանի որ հայոց մեջ դեռևս գերիշխող էր ավանդական վերաբերմունքը Քաղկեդոնի ժողովի նկատմամբ<sup>51</sup>: Փոտ պատրիարքի գործակալ Վահան արքեպիսկոպոսի ջանքերը նշանակալի արդյունք չեն տվել<sup>52</sup>: Նման եզրահանգումը բխում է Շիրակավանի ժողովի արդյունքները նրան հաջորդած իրադարձություններին համադրելիս:

### 3. Փոտ պատրիարքի նամակը իշխանաց իշխան Աշոտ Բագրատունուն

Ընտագայում նույնպես Փոտ պատրիարքը ջանք չի խնայում ստիպելով համոզելու հայ գործիչներին ընդունել Քրիստոսի բնության «երկու բնություն, մեկ անձ» բանաձևը: Այս անգամ նրա «թիրախը» իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին էր (862-887): Նրան ուղղված ոչ ծավալուն նամակի օրինակը՝ «Պատձեն թղթոյն Հայրապետին Կոստանդնուպոլսի Փոտայ առ Աշոտ իշխանաց իշխանն» վերնագրով, տպագրվել է «Գիրք թղթոց»-ում<sup>53</sup>: Նամակը թվագրում չունի: Այս հանգամանքը ուսումնասիրողների շրջանում տարակարծությունների առիթ է տվել: Հայր Մ. Օրմանյանը ենթադրում է, որ Փոտ պատրիարքը Աշոտ Բագրատունուն մինչ Շիրակավանի ժողովն է ուղարկել նամակը, որի բովանդակությունն էլ ժողովականներին արդեն հայտնի էր<sup>54</sup>: Մի շարք ուսումնասիրողներ Փոտ պատրիարքի նամակների ժամանակագրության հարցում, ըստ էության պաշտպանելով Մ. Օրմանյանի տեսակետը, գտնում են, որ Աշոտ Բագրատունուն ուղարկված նամակը նախորդել է Զաքարիա հայրապետին հղված նմանատիպ գրությանը<sup>55</sup>: Սակայն ակնհայտ է, որ խնդրո առարկա թղթակցությամբ զբաղ-

50 Տե՛ս Հայոց պատմություն, հատ. Բ, Միջին դարեր (IV դար - XVII դարի առաջին կես), գիրք երկրորդ (IX դարի կես - XVII դարի առաջին կես), Եր., «Չմագպ» հրատ., 2014, էջ 107:

51 Տե՛ս Юзбашян К., Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв., М., изд. Наука, 1988, էջ 99:

52 Վ. Հացունին կարծում է, որ Շիրակավանի ժողովի հայրերը «ողջամտութեան ապալինած քան աւանդական նախապաշարման», ընդունել են «մի բնություն» բանաձևը: Տե՛ս Հացունի Վ., նշվ. աշխ., էջ 478: Անընդունելի է Պ. Անանյանի տեսակետը, թե Քաղկեդոնի ժողովի բանաձևը «Շիրակավանի ժողովին մեջ հայերը ընդունած էին Զաքարիա կաթողիկոսին օրով, բայց կ'երեւի թէ Գեորգ կաթողիկոսին ընտրութեան առթի վերադարձան իրենց աւանդութեան»: Տե՛ս Անանեան Պ., Փոտ պատրիարքին նամակը Աշոտ իշխանին, «Բազմավէպ», 1990, N 1-2, էջ 12: Հմտ. Ըստկարեան Վ., նշվ. աշխ., էջ 196:

53 Տե՛ս «Գիրք թղթոց», էջ 279-282: Խնդրո առարկա թուղթը առաջին անգամ հրատարակել է Ն. Պողարեանը: Տե՛ս Պողարեան Ն., Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հատ. Գ, Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 1968, էջ 521-525: Նույն նամակը լրացումներով և ամբողջական բովանդակությամբ հրատարակել է նաև մեծավաստակ հայագետ Ն. Ալկինյանը: Տե՛ս Պատձեն թղթոյն մեծի Հայրապետին Կոստանդնուպոլսի Փոտայ առ Աշոտ իշխանաց իշխան, «Հանդէս ամսօրեայ», 1968, N 10-12, էջ 439-450 (այսուհետ՝ Պատձեն թղթոյն մեծի Հայրապետին):

54 Տե՛ս Օրմանյան Մ., նշվ. աշխ., § 670, պլոնակ 1138-1139:

55 Տե՛ս Կոզեան Ա., նշվ. աշխ., էջ 278; Grousset, նշվ. աշխ., էջ 383-384; Laurent J., L'Arm'enie entre Bysance et l'islam depuis la conquete arabe jusqu'en 867, Paris, 1919, էջ 310-311:

վողների աչքից վրիպել է մի կարևոր հանգամանք. «Գիրք թղթոց»-ում եղած բուն նամակին նախորդում է մի հիշատակարան՝ հետևյալ բովանդակությամբ. «Ի լուսանցս գտանի գրեալ. Մինչդեռ գրեցաւ թուղթս այս զՄարկայ ԳԺ-աներորդ ամն թագաւորութեանն 2Թ ամ է. և ի Քաղկեդոնի ժողովոյն ՃԽԴ ամ էր. ի հայրապետութեան Հայոց Գէորգեայ և ի թուին ՅԻ իշխանաց իշխա... (նայ) Ա... (շոտոյ)»<sup>56</sup>: Մատենագրական նյութի ուսումնասիրությունը փարատում է հիշատակարանի պատկանելության կասկածը, քանի որ նրա՝ մեզ հետաքրքրող հատվածը՝ «ի հայրապետութեան Հայոց Գէորգեայ և ի թուին ՅԻ իշխանաց իշխա... (նայ) Ա... (շոտոյ)», գրված է Աշոտին ուղղված նամակի անմիջապես վերևը<sup>57</sup>: Այստեղ խոսքը Հայոց կաթողիկոս Գևորգ Բ Գառնեցու (877-897) և իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու մասին է: Պարզվում է, որ նամակը գրվել է Աշոտի իշխանության 20-րդ տարում, այն է՝ 881 թ., Փոտ պատրիարքի աթոռակալության երկրորդ ժամանակահատվածում (877-886)<sup>58</sup>: Փոտ պատրիարքը թերևս հույս ուներ, որ Աշոտ Բագրատունու ազդեցությունը մեծ կլինի Հայոց նորընծա կաթողիկոս Գևորգ Գառնեցու վրա, և վերջինս չի ցուցաբերի նախորդի՝ Զաքարիա Չագեցու համառությունը<sup>59</sup>: Թվագրության վերաբերյալ մեր եզրակացությունը ավելի հիմնավոր է դառնում, երբ մեկնում ենք նամակի հետևյալ արտահայտությունը. «Այլ վասն տրտմութեանն որ ի ձեզ կրեցաւ ըստ վտանգաւոր մերոց պատահմանցն, եւ դարձեալ ուրախութեանցն, եւ վերստին դառնալն յարքայական քաղաքս, որպէս ինչ թերեւս առ պատահմունս մեր է իմանալ, քան թէ Աստուծոյ տեսչութիւնք անհետազաւտելիք մեզ»<sup>60</sup>: Այս տողերով Փոտ պատրիարքը ակնարկում է իր գահագրկումը և կրկին գահակալումը<sup>61</sup>: Շեշտելով Աշոտ Բագրատունու ափսոսանքի և ուրախության զգացումները իր գահընկեցության և վերստին պատրիարք դառնալու առիթով՝ Փոտ պատրիարքը հուշում է, որ ինքը նախապես Աշոտ Բագրատունուց նամակ է ստացել, որտեղ այդ մասին շարադրված է եղել:

Նամակը սկսվում է Բագրատունի իշխանի արժանապատվությունը շոյող մեծարանքի արտահայտություններով. «Քաջայայտդ բարեպաշտութեամբ հզաւրագոյնդ ձոխութեամբ, բարձրագոյնդ ի համասեռս, Աշոտ իշխանդ Հայոց Մեծաց»<sup>62</sup>: Ընդգծված սիրալիրությունը, որով շարունակում է

56 «Գիրք թղթոց», էջ 278:

57 Հմմտ. **Անանեան Պ.**, Փոտ պատրիարքին նամակը Աշոտ իշխանին, «Բագնավէպ», 1990, N 1-2, էջ 9; Նույնի «Գիրք թղթոց»-ի քանի մը խնդրական հարցեր, «Բագնավէպ», 1985, N 3-4, էջ 262-264:

58 Փոտ պատրիարքի գահընկեցությունը պայմանավորված էր Վասիլ Ա-ի (867-886) եկեղեցական քաղաքականությամբ: Հռոմի հետ հաշտ և խաղաղ հարաբերություններ կառուցելու համար Վասիլն իր իշխանության առաջին տարում քաղաքական նպատակներով զոհաբերեց պատրիարք Փոտին: Սորընծա կայսրը չէր ցանկանում սրել իր հարաբերությունները պապի հետ, որի համակրանքը անհրաժեշտ էր ապագա նվաճումների համար: Իսկ Փոտն ուներ ընդգծված հակապապական դիրքորոշում և երկու եկեղեցիների պառակտման զլխավոր պատճառն էր: Տե՛ս **Արդոնց Ն.**, Վասիլ Հայագն, «Երկեր», հատ. Ա, Եր., ԵՊՀ հրատ., 2006, էջ 421, 424:

59 Տե՛ս **Վարդանյան Վ.**, նշվ. հոդվ., էջ 229:

60 Պատճէն թղթոյն մեծի Հայրապետին, էջ 441-442:

61 Տե՛ս **Անանեան Պ.**, Փոտ պատրիարքին նամակը Աշոտ իշխանին, էջ 9:

62 Պատճէն թղթոյն մեծի Հայրապետին, էջ 439-440: Տե՛ս նաև «Գիրք թղթոց», էջ 279:

իր խոսքը պատրիարքը, խոսում է թղթակցողների բարեկամական հարաբերությունների մասին, ինչպես նաև վկայում նախորդ նմանատիպ գրությունների գոյությունը. «Ընդարձակագոյն սիրելութեան կապակցութիւն ի ձեռն թղթոյս մեր ծանուցի խորհրդականութեանդ քո: Ըստ որում երբեմն եւ ի քո թուղթսն, որ առ մեզ սէր բացատրեցեր ի բարձրագոյն որ ի քեզ խորհրդոց, ճշմարիտ սիրոյդ զոր ունիս առ մեզ յերկուց ներգործեալ ի հանձարեղ ստաց, եւ քաջատոհմ մարմնոյդ, յոր խորհեալ ըստ իւրաքանչիւրոցդ, եւ որ ի սոյն պատկանի խորհուրդ»<sup>63</sup>: Նա բարեկամաբար Աշոտ Բագրատունուն խնդրում է գործադրել իր իշխանական հնարավորությունները՝ «հաստատել ի ձեռն սրբոց ժողովոցն յամբիժ հաւատն, եւ ոչ խտտրել ի թագաւորական շաւղացն»<sup>64</sup>: Աշոտ իշխանի իմաստությունը և հանձարը ընդգծելով՝ Փոտ պատրիարքը չի շրջանցում իշխանի՝ իր տեսանկյունից կարևոր մեկ այլ արժանիք, այն է՝ հավատարմությունը Բյուզանդիայի «յորթոտոքսաց սուրբ թագաւորացն»<sup>65</sup>: Այդ կապակցությամբ Փոտ պատրիարքը հիշում է Աշոտ Բագրատունու մատուցած ծառայությունները և սիրելի լինելը. «Այսոքիկ ի մէնջ գծագրեցան առ քոյդ աստուածապարգեւ պետութիւն. ոչ յաճախագոյն բանից կարատացեալ քոյդ հանձարեղութիւնդ, այլ միայն զի առ հանուրսն ծանուցանել զիրին ճշմարտութիւնն: Իսկ զխնամակալութիւնն իբրեւ զհայր եւս առաւել բարձրագոյն մնալ, առ որ սիրելի է քոյդ մեծութիւնն, որ եւ զնուաճեալսդ ընդ ձեռամբ քո խնամէ մեծ թագաւորութիւնս, անմոռաց կրելով ի միտս զքո հնագանդութեան սպասաւորութիւնն, որ մերձ կացուցանեն զքեզ սուրբ թագաւորութեանս, եւ բարձրագոյն իշխանութեանս Աստուծոյ տուեցելոյ»<sup>66</sup>:

Նամակի շարունակությունից հայտնի է դառնում, որ իր նախորդ թղթում Աշոտ Բագրատունին անընդունելի է համարել Քաղկեդոնի ժողովի բանաձևը, որովհետև Փոտ պատրիարքը դժգոհում է, թե անհիմն պատճառներ են բերված «ի ձեռն ի ձեռն գրոյ»: Եվ քանի որ Հայոց եկեղեցին բազմիցս ազդարարել է իր հավատարմությունը առաջին երեք տիեզերական ժողովների հաստատած դավանանքին, Փոտ պատրիարքը ամեն կերպ ջանում է ապացուցել, որ «չորրորդ Սինհոդոսն ի թիւ երից ժողո-

63 Պատձէն թղթոյն մեծի Հայրապետին, էջ 439-442:

64 Պատձէն թղթոյն մեծի Հայրապետին, էջ 447-448: Տե՛ս նաև «Գիրք թղթոց», էջ 281:

65 Պատձէն թղթոյն մեծի Հայրապետին, էջ 449-450: Օրթոդոքս թագավորներ ասելով՝ Փոտ պատրիարքը նկատի ունի Վասիլ Ա-ին և նրա գահակից որդի Լևոնին (886-911):

66 Պատձէն թղթոյն մեծի Հայրապետին, էջ 447-450: Բյուզանդական կայսրության ունեցած վերաբերմունքը Սեծ Հայքի տիրակալների հանդեպ բնութագրվել է «հոգևոր զավակ» արտահայտությամբ: Այդ մասին է վկայում լավատեղյակ հեղինակ Հովհաննես Դրասխանակերտցին. «Այլ եւ մեծ կայսրն Յունաց Բարսեղ ոչ փոքր ինչ պայման խաղաղութեան եւ հաճութեան եւ սիրոյ հաստատեր ընդ արքային մերոյ Աշոտոյ որդի սիրելի զնա անուանելով»: Տե՛ս **Յովհաննէս Դրասխանակերտցի**, Պատմութիւն Հայոց, «Մատենագիրք հայոց», ԺԱ. հատոր, Ժ. դար, Պատմագրութիւն, Գիրք Ա., Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 444: Բյուզանդական կայսեր «հոգևոր զավակ» կոչումը Բագրատունիների մենաշնորհն էր և սկիզբ էր առնում Աշոտ Ա Բագրատունուց: Տե՛ս **Յուզբաշյան Կ.**, «Բագրատունյաց շրջանի» Հայաստանը միջազգային իրավունքի տեսանկյունից, «ՊԲՀ», 1975, N 1, էջ 43:

վոցն ի ձէնջ խոստովանեալ փառաւորեսցի, այնուհետեւ բարձեալ գտանի ամենայն որ ըստ ձեզ անուղղայ կարծիք»<sup>67</sup>:

Աշոտ իշխանաց իշխանը Քաղկեդոնի դրոյթները նույնացրել է նեստորականությանը, քանի որ իր պատասխանում Փոտ պատրիարքը հերքում է ուղղափառությունից շեղման մեղադրանքը՝ հայտարարելով, որ Քաղկեդոնի ժողովը «հաստատեաց զանկումն եւ զտարամերժումն Նեստորի, եւ զբարձումն գարշելի նորա խոստովանութեանն»<sup>68</sup>: «Արդ քանզի չորրորդ ժողովս երրորդիս միաբանեաց, զարմանում է խորագետ պատրիարքը, զի ա՛րդ յանձին ունիք հայիոյել եւ չարահամբաւել»<sup>69</sup>: Որպէս Քաղկեդոնի ժողովի ուղղափառության ծանրակշիռ ապացոյց՝ Փոտ պատրիարքը վկայակոչում է հեղինակավոր պատրիարքական աթոռների ընդունելի վերաբերմունքը դրա նկատմամբ՝ հայտարարելով. «Վասն զի Հռոմն առաջին այսպէս պատուէ զժողովն չորրորդ, ըստ որում եւ մեք զերիս ժողովսն յառաջագոյն քան զսա եղեալ: Սապէս պատուակցութեամբ ընդունի եւ Մեծ Աթոռն Աղեքսանդրի, եւ Աթոռն Երուսաղէմի եւ ոչ կրեն հակառակութիւն վասն ժողովոյս այսմիկ սրբոյ»<sup>70</sup>:

Քաղկեդոնի ուղղափառությունը հաստատող փաստարկների վկայակոչմանը զուգահեռ Փոտ պատրիարքը քննադատում է հայոց «մի բնություն» բանաձևը, ձգնում օրինակներով ցոյց տալ նրա «անտրամաբանականությունը»: Նա փորձում է դա նույնացնել հայերի համար ոչ միայն անընդունելի, այլև վիրավորական՝ Եվտիքեսի ծայրահեղ միաբնականության ուսմունքին. «Զի որք համարձակին ասել ի Քրիստոս մի բնութիւն, աճէ ի վերայ անձին իւրոյ զԵւտիքեայ դատապարտութիւնն»<sup>71</sup>: Հայ հոգևորականության շրջանում հակափոփոխական ընդդիմության ձևավորման կարևոր պատճառներից մեկը հայոց միաբնականության իմաստի միտումնավոր նենգափոխումն էր<sup>72</sup>:

Նամակը եզրափակվում է Փոտ պատրիարքի բարեկամական ժեստով. Աշոտ Բագրատունու խնդրանքով «առաքեցաք քաջատոհմութեան եւ մեծանձնութեանդ քո յիշատակ արինութեան ի պաշտպանեալ Աստուածընկալ պատուական խաչէս»<sup>73</sup>:

67 Պատճէն թղթոյն մեծի Հայրապետին, էջ 443-446: Տե՛ս նաև «Գիրք թղթոց», էջ 280:

68 Նույն տեղում, էջ 443-444: Տե՛ս նաև «Գիրք թղթոց», էջ 279:

69 Նույն տեղում: Տե՛ս նաև «Գիրք թղթոց», էջ 279:

70 Նույն տեղում, էջ 445-446: Տե՛ս նաև «Գիրք թղթոց», էջ 280:

71 Նույն տեղում, էջ 447-448: Տե՛ս նաև «Գիրք թղթոց», էջ 281:

72 Տե՛ս Աճառեան Պ., Փոտ պատրիարքին նամակը Աշոտ իշխանին, էջ 10:

73 Պատճէն թղթոյն մեծի Հայրապետին, էջ 449-450: Տե՛ս նաև «Գիրք թղթոց», էջ 282:

#### 4. Իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու պատասխանը Փոտ պատրիարքին

Փոտ պատրիարքի նամակին հետևում է Աշոտ Բագրատունու ծավալուն պատասխանը: Դա իշխանաց իշխանի հանձնարարականով պատրաստում է Սահակ Ապիկուրեշ կամ Մռուտ մականունով վարդապետը<sup>74</sup> «լի իմաստութեամբ և գիտութեամբ»<sup>75</sup>: Սահակ վարդապետի ինքնության վերաբերյալ հայկական սկզբնաղբյուրներում տեղեկությունները սակավ են, և դրանք գերազանցապես վերաբերում են նրա կյանքի գուցե ամենանշանակալի գործին՝ խնդրո առարկա նամակին: Աշոտ Ա Բագրատունու ժամանակներում էր ապրում «Սահակ վարդապետն Հայոց, որ ըստ անվաճայնութեան Ապիկուրեշն կոչիւր, որ գրեաց պատասխանի թղթոյն Փոտայ Յունաց պատրիարգին լի իմաստութեամբ եւ գիտութեամբ»<sup>76</sup>: Նամակի հեղինակ Սահակ վարդապետը Բյուզանդիայի տիրապետության տակ գտնվող Տայքի եպիսկոպոսն էր: Ենթադրվում է, որ այնտեղ Հայ եկեղեցու վարդապետությունը քարոզելու և հակաքաղկեդոնական դիրքորոշման համար հալածվել է հույն հոգևորականների կողմից և ապաստան գտել իշխանաց իշխան Աշոտի մոտ. «Այտքիկ ի թղթոյն Փոտայ սակաւ ինչ գրեցաւ. որոյ գրեաց պատասխանի Սահակ Մռուտն կոչեցեալ, որ եպիսկոպոս էր Տայոց ի յԱշունքն, և հալածեալ անտի վասն հաւատոց, եկն ի Հայս առ Աշոտ»<sup>77</sup>: Դատելով նամակի բովանդակությունից՝ Սահակ վարդապետը ստացել է հիմնավոր աստվածաբանական կրթություն<sup>78</sup>:

Նամակի բովանդակությունը պայմանականորեն կարելի է բաժանել երեք մասի.

- Քաղկեդոնի ժողովի դրույթների և նեստորականության համեմատական վերլուծություն և հերքում:
- Եվտիքեսի ծայրահեղ միաբնակության ժխտում և նրանից հայոց «մի բնություն» վարդապետության տարանջատում:
- Հայոց եկեղեցու «մի բնություն» դավանաբանության հիմնավորում:

74 Նամակը հայտնի է «Պատասխանի թղթոյն Փոտայ գրեալ Սահակայ Հայոց վարդապետի հրամանաւ Աշոտայ իշխանաց իշխանի Հայոց» վերնագրով (այսուհետ՝ Պատասխանի թղթոյն Փոտայ) («Գիրք թղթոց», էջ 283-294; **Ալիսեան Ն.**, «Հանդես ամսօրեայ», 1968, N 10-12, էջ 451-471):

75 Հակառակ կարծիքին է հայր Մ. Չամչյանը: Ըստ նրա՝ Սահակ Ապիկուրեշ վարդապետը նամակ է գրել Փոտին «լի տգիտութեամբ և նախատանօք»: Տես **Չամչյան Մ.**, ԼՂՎ, սջխ, էջ 687:

76 **Ստեփանոս Տարանցի Ասորիկ**, նշվ. աշխ., հանդես Գ, ԳԼ, Բ, էջ 740-741: Աշոտի հրամանով Փոտի թղթին պատասխանում է «վարդապետն Իսահակ գեղեցիկ և իմաստասիրական»: Տես **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, աշխատ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1961, էջ 80:

77 Հուաքուն պատմության **Վարդանայ վարդապետի**, էջ 85: Աշունքի կամ Օշկի վանքը գտնվում էր Տայքի Ազորդաց Փոր գավառում: Քաղկեդոնականների ազդեցությունն այնտեղ այնքան մեծ էր, որ 9-րդ դարի վերջին քառորդին փորձում են Աշունքի վանքը վերածել քաղկեդոնական սրբավայրի: Տես **Եղիազարյան Ա.**, Հայ Բագրատունիների տերությունը (885-908), Եր., ԵՊՀ հրատ., 2011, էջ 302:

78 Հ. Քոսեյանի կարծիքով՝ Սահակը մասնակցել է Շիրակավանի ժողովին և շնորհիվ աստվածաբանական խոր գիտելիքների ներդրում է ունեցել ժողովի հռչակած կանոնների մշակման և ձևակերպման մեջ: Տես **Քոսեյան Հ.**, Հայ եկեղեցական մատենագրություն, էջ 221:

Նամակն ավարտվում է Փոտ պատրիարքի ուղարկած տերունական խաչի մատուցի առիթով Աշոտի երախտագիտության զուսպ արտահայտությամբ. «Խոնարհ երկրպագություն մատուցի եւ շնորհակալություն յաւէտ միւս եւս վայելչական ողջունիս»<sup>79</sup>:

Մ. Օրմանյանի դիպուկ գնահատմամբ՝ նամակի «ոճը հանդարտ է, առանց կիրքի, համեստ դարձուածներով, եւ առանց գիտնական հայրապետին անձնասիրութիւնը վիրաւորելու»<sup>80</sup>: Նամակների ամենաէական հատկանիշն այն է, որ երկու կողմերը համառորեն մեղադրում են միմյանց ուղղափառությունից շեղվելու մեջ. Փոտ պատրիարքը Հայ եկեղեցուն վերագրում է Եվտիքեսի ծայրահեղ միաբնակությունը, իսկ հայ վարդապետները մերժում են Քաղկեդոնի ժողովը նեստորականության գաղափարներին հարելու պատճառաբանությամբ: Նրանց ուղերձներից տպավորություն է ստեղծվում, որ ո՛չ բյուզանդական, ո՛չ հայկական կողմը դավանանքի հարցում տրամադրված չեն գիշումների: Պ. Անանյանի դիպուկ բնութագրմամբ՝ նրանց նամակագրությունը «կարելի է որակել՝ խուլերու միջեւ խօսակցութիւն, այնու որ երկու կողմերն ալ կը ջանան իրենց տեսակէտը պնդել ու կրկնել, առանց ուշ դարձնելու դիմացինին տեսակէտին»<sup>81</sup>:

Քաղկեդոնի դավանանքն ընդունելու Փոտ պատրիարքի հիմնական պահանջը Սահակ վարդապետը մերժում է այդ դավանանքի՝ նեստորականությանը հարելու փաստարկումներով: Ըստ հայ վարդապետի՝ Քաղկեդոնի ժողովի հավատո բանաձևը, Լևոնի տոմարը և Նեստորի գաղափարները նույնական են: Չորս կետով Սահակը համեմատական վերլուծություն է կատարում, զուգադրում Նեստորի գրածները Լևոնի տոմարից քաղված վկայություններին, մատնանշում նրանց բովանդակային նմանությունը. «Գրէ Նեստոր յիւրում գլխաւորագոյն տրամաբանութեան հաւատոյն բանի այսպէս. Ես անփոփոխելի եւ անայլայլելի Բանին Աստուծոյ երկուս բնութիւնս խոստովանիմ. Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, և մարդ կատարեալ ի գաւակէ Դաւթի և Աբրահամու: Գրէ Լեւոն յիւրում տոմարին. Աստուած խոստովանիմ ըստ այնմ ըստ որում ի սկզբանէ էր Բանն, և Բանն էր առ Աստուած, և Աստուած էր Բանն. և մարդ խոստովանիմ ըստ այնմ ըստ որում՝ Մարմին եղև և տաղաւարեաց ի մեզ»<sup>82</sup>: Նմանությունն ավելի ակնառու է հաջորդ համեմատության մեջ, որում խոսվում է Աստծո խոսքի մարմին ստանալու և մարդու մեջ բնակվելու մասին. «Գրէ Նեստոր. Բանն մարմին եղեւ եւ տաղաւարեցաւ ի մեզ: Գրէ Լեւոն. Իմաստուն շինողին իւր տուն, զի բանն մարմին եղեւ եւ տաղաւարեաց ի մեզ»<sup>83</sup>: Նեստորից և Լևո-

79 «Գիրք թղթոց», էջ 294: Տե՛ս նաև Պատասխանի թղթոյն Փոտայ, էջ 471-472:

80 Օրմանեան Մ., նշվ. աշխ., § 670, սյունակ 1138:

81 Անանեան Պ., Փոտ պատրիարքին նամակը Աշոտ իշխանին, էջ 14:

82 «Գիրք թղթոց», էջ 284-285: Հմտ. Պատասխանի թղթոյն Փոտայ, «Հանդէս ամսօրեայ», 1968, N 10-12, էջ 455-456:

83 «Գիրք թղթոց», էջ 285: Տե՛ս նաև Պատասխանի թղթոյն Փոտայ, էջ 455-456:



նի տոմարից բերված ևս երկու համեմատություններով հիմնավորելով իր թեզը՝ Սահակ վարդապետը բավարարված հայտարարում է. «Տեսեր, ով սիրելություն, զհամաձայնությունդ Նեստորի եւ Լեւոնի առ բնութեանցն զանազանութիւն եւ ներգործութեանցն յատկութիւնս»<sup>84</sup>:

Որքան որ վիճելի են Քաղկեդոնի «հաւատոյ» բանաձևի դրույթները նեստորական հոչակելու Սահակ վարդապետի փաստարկներն ու դատողությունները, նույնքան հիմնավոր և համոզիչ են Հայ եկեղեցու վարդապետությունը պաշտպանելու նրա փաստարկներն ու հղումները: Բոլորին հայտնի է «զմեր դաւանութիւն, ըստ որում մի ասեմք ի Քրիստոս բնութիւն»: Սակայն դա չի նշանակում, որ «մի բնություն» գաղափարը հայերը ընկալում են Եվտիքեսի բանաձևով և քարոզած իմաստով:

Առանց ավելորդ քաղաքավարության և նրբանկատության՝ Սահակ վարդապետը բազմափորձ հոգևորականին մեղադրում է կանխակալ դատողության մեջ՝ ասելով. «Ոչ ուղիղ դատեցար, վասն զի ամպարիշտն այն Եւտիքէս մի բնութիւն ի Քրիստոս ըստ փոփոխմանն ասաց»<sup>85</sup>: Փոտ պատրիարքի խորագիտակությանը քաջատեղյակ լինելով՝ Սահակ վարդապետը զարմանում է. «Արդ զիա՛րդ հաւանեալ քո ամենակատար գիտութիւնդ ի մեզ հարել զայդպիսի ատարոտի խորհուրդ զրաբանութեան առ ի չարահամբաւել զմեզ, զոր ոչ վայել է քո սրբութեանդ»<sup>86</sup>: Սահակ վարդապետը տարանջատում է Հայ եկեղեցու վարդապետությունը Եվտիքեսի վտանգավոր գաղափարներից՝ շեշտելով, որ «ոչ լինի բարձումն Աստուածային կամ մարդկային բնութեանն»<sup>87</sup>: Իր թեզը բացատրելու համար բերում է հետևյալ օրինակը. Գաբրիել և Միքայել հրեշտակները զուտ հոգի են, հետևաբար նրանց բնությունը պարզ է: Աղամը և Նոյը ստեղծված են հոգուց և մարմնից, սակայն մեկ բնություն են կոչվում, ըստ այդմ՝ նույնը «ասէաք ի Քրիստոս մի բնութիւն»<sup>88</sup>:

Հատկանշական է, որ այս վիճաբանության ընթացքում հայ հեղինակն իր ընդդիմադիր տեսակետները հիմնավորելու համար մեջ էր բերում ընդհանրական եկեղեցու նշանավոր հայրերից մեկի՝ Կյուրեղ Ալեքսանդրացու երկերից բազմաթիվ վկայություններ՝ օգտվելով նաև նրա հեղինակությունից: Մարդը նույնպես բաղկացած է հոգուց և մարմնից, «բայց մարդն ոչ ասի երկուք բնութիւնք, այլ մի»<sup>89</sup>: Մարդու օրինակը գործածել է նաև ս. Կյուրեղը՝ Քրիստոսի մարդեղության խորհուրդը բացատրելու համար: Վկայություններ է բերում Սուրբ Գրքից և սուրբ հայրերի աշխատություններ

84 «Գիրք թղթոց», էջ 285: Տե՛ս նաև Պատասխանի թղթոյն Փոտայ, էջ 455-456:

85 «Գիրք թղթոց», էջ 286: Տե՛ս նաև Պատասխանի թղթոյն Փոտայ, էջ 457-458:

86 «Գիրք թղթոց», էջ 286: Տե՛ս նաև Պատասխանի թղթոյն Փոտայ, էջ 457-458:

87 «Գիրք թղթոց», էջ 286-287: Տե՛ս նաև Պատասխանի թղթոյն Փոտայ, էջ 457-458: Ըստ Եվտիքեսի Քրիստոսի աստվածային և մարդկային բնությունների միախառնման հետևանքով ծնվում է երրորդը, կամ բնություններից մեկը վերանում է:

88 «Գիրք թղթոց», էջ 286: Տե՛ս նաև Պատասխանի թղթոյն Փոտայ, էջ 457-458:

89 «Գիրք թղթոց», էջ 287: Տե՛ս նաև Պատասխանի թղթոյն Փոտայ, էջ 457-458:

րից, պաշտպանում եփեսոսի ժողովի հավատո քանաձևը: Այս հանգամանքը եկեղեցական հարաբերություններում խիստ կարևոր էր և մեծ դեր ուներ հակառակորդի վրա ներգործելու հարցում:

Սահակ վարդապետը հայտարարում է, որ Հայ եկեղեցին հավատարիմ է ս. Գրիգոր Լուսավորչից ավանդված վարդապետությանը, որը հանեց Հայաստանը կռապաշտական խավարից, արգելեց զանազան հերձվածների մուտքը Հայոց աշխարհի և «մինչև ցայսար ժամանակիս ոչ խոտորեալ աջ կամ յահեակ. ուստի եւ ոչ պէտք եղեն նորաձայն վարդապետութեանց եւ ժողովոց ի տեղիս տեղիս գունակ գունակ, որոց գիտեմք առ ի նորաձեւութիւնն կարգաց եւ սահմանաց հաւատոյ»<sup>90</sup>:

Արքայական թագ ստանալու համար Աշոտ իշխանաց իշխանը լավ հասկանում էր, որ պետք է ունենալ ոչ միայն Արաբական խալիֆայթի բարեհաճությունը, այլև Բյուզանդիայի դրական դիրքորոշումը<sup>91</sup>: Այդ նպատակի անթաքույց հետապնդումով նամակում նա քաղաքական ուղերձ է հղում բյուզանդական իշխանություններին՝ խոստանալով հավատարիմ «մնալ մեզ ի սպասաւորական հնազանդութեան, սուրբ եւ աստուածապարգեւ թագաւորութեանը»<sup>92</sup>:

Նամակների վերլուծությունից պարզ է դառնում, որ թղթակցողները սեփական թեզերի հիմնավորման նպատակով երկուստեք չեն խորշել դիմելու այնպիսի մեթոդների, ինչպիսիք են բնագրի միտումնավոր աղավաղումը կամ համատեքստից կտրած շահեկան հատվածի մեջբերումը: Անընդունելի այս մեթոդների կիրառումը վկայում է հակառակորդի սխալակալությունը ապացուցելու և առաջադրված նպատակին ամեն գնով հասնելու նրանց անզուսպ ցանկությունը:

## Եզրակացություններ

Սկզբնաղբյուրների տեղեկությունների վերլուծությունը և հրապարակում առկա նյութերի քննությունը թույլ են տալիս եզրակացնել՝

- Զաքարիա Ա Չագեցու օրոք (855-876) հայ հոգևոր և աշխարհիկ գործիչների հետ Կոստանդնուպոլսի Փոտ պատրիարքի նախաձեռնած դավանաբանական թղթակցությամբ 9-րդ դարի երկրորդ կեսին դրվում է հայբյուզանդական եկեղեցական հակամարտության նոր շրջափուլի սկիզբը.
- Բյուզանդիայի և Հայաստանի խորքային հարաբերությունների լոկ մակերեսային կողմը ներկայացնող այս գործընթացները միտված էին Հայաստանի բռնակցման համար պարարտ հող ստեղծելուն:

90 «Գիրք թղթոց», էջ 291-292: Տե՛ս նաև Պատասխանի թղթոյն Փոտայ, էջ 467-468:

91 Տե՛ս Юзбашян К., նշվ. աշխ., էջ 100:

92 «Գիրք թղթոց», էջ 293: Տե՛ս նաև Պատասխանի թղթոյն Փոտայ, էջ 469-470:

- 862 թվականին Շիրակավանում գումարված եկեղեցաժողովը քննության է առնում Փոտ պատրիարքի առաջարկները, ըստ որոնց՝ Հայ եկեղեցին պետք է ընդուներ Քրիստոսի «երկու բնություն, մեկ անձ» քաղկեդոնյան բանաձևը: Ժողովն ուղեկցվում է հայոց դավանանքի ջատագովների և քաղկեդոնականամետ հոգևորականների միջև ծավալված պայքարով: Ի հեճուկս Փոտ պատրիարքի ներկայացուցիչ Վահան եպիսկոպոսի գործադրած ջանքերի՝ Շիրակավանի եկեղեցաժողովում Քաղկեդոնի բանաձևը չի ընդունվում: Այն ավարտվում է առանց դասական եկեղեցական կանոնների ընդունման: Հայ եկեղեցու հայրերը դիվանագիտորեն մերժում են Պոլտ աթոռի առաջարկները՝ ըստ էության խափանելով հայ-բյուզանդական եկեղեցական միության ծրագիրը:
- Հայոց եկեղեցու ինքնուրույնության վերացման քաղաքականությունը Փոտ պատրիարքը շարունակում է նաև իր աթոռակալության երկրորդ շրջանում (877-886): Այս անգամ նրա թղթերի հասցեատերը իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին էր: Սահակ Ապիկուրեշի (Մոռուտ) ձեռքով գրված պատասխան նամակով Փոտ պատրիարքի փաստարկները հերքելով՝ Աշոտ Բագրատունին հաստատում է իր հավատարմությունը Հայ եկեղեցու դավանանքային ուղեգծին: Ցույց է տալիս հայոց աշխարհիկ և հոգևոր իշխանությունների միասնական դիրքորոշումը ազգային եկեղեցու ինքնուրույնության և անկախության պաշտպանության հարցում:
- Հայոց աշխարհիկ և հոգևոր ավագանու շրջահայաց դիրքորոշումը բխում էր գոյություն ունեցող աշխարհաքաղաքական իրողություններից: Տարածաշրջանում դեռևս մեծ դերակատարում ունեցող Արաբական խալիֆայության հետ հաշվի չհստելը կարող էր անկանխատեսելի աղետներ բերել Հայաստանին: Ուստի դիվանագիտորեն մերժելով բյուզանդական եկեղեցու հավակնությունները՝ Հայ եկեղեցին գոհացնում էր Բյուզանդիայի դարավոր ավտյան Արաբական խալիֆայությանը:
- Հայ-բյուզանդական եկեղեցական հակամարտության նոր շրջափուլը դառնում է Բյուզանդիայի՝ հետագայում լայն թափ ստացած ծավալապաշտական քաղաքականության սկիզբը արևելքում:
- Միջեկեղեցական պայքարը հայերի համար ազգային ինքնության պահպանման պայքար էր: Դավանանքային և կրոնաժխական ինքնուրույնությունը պաշտպանելով՝ Հայ եկեղեցին խորացնում էր ազգային ինքնության զարգացման գործընթացը:

**Վարդան Ա. Ալեքսանյան** – հեղինակ է մոտ երկու տասնյակ գիտական հոդվածների և երեք ուսումնամեթոդական ձեռնարկների: Զբաղվում է Հայոց եկեղեցու պատմության հիմնախնդիրներով: Գիտական ուսումնա-

սիրությունները վերաբերում են Սյունիքի եպիսկոպոսության՝ վաղ և զարգացած ավատատիրության դարաշրջանների պատմությանը:

Էլ. հասցե՝ vardanalexanyan406@gmail.com

Summary

## **ARMENIAN-BYZANTINE CHURCH CONFRONTATION IN THE SECOND HALF OF THE 9TH CENTURY**

Vardan A. Aleksanyan

*Candidate of Sciences in History*

**Key words** – Council of Chalcedon, monophysitism, Zakaria I Dzagets, Patriarch of Constantiople Photius, Ashot I Bagratuni, Sahak Apikuresh, religious correspondence, Council of Shirakavan, Church union, Nestorianism, Byzantine church.

The second half of the 9th century is the beginning of a new stage in the confrontation between the Armenian and Byzantine churches. At the beginning of the 860s, the correspondence of the Patriarch of Constantinople Photius (857-867, 877-886) with Catholicos Zakaria I (855-876) and the Prince of Princes Ashot I (862-887) began. The main subject of the correspondence was the relation to the Chalcedonian Cathedral and the attempts to create the Armenian-Byzantine church unity. It was a challenge not only to the Armenian Church, but to the entire Armenian people, since the hidden goal of the Constantinople throne was to create the ground for the final annexation of Armenia. For the purpose of discussing the proposal and making decisions, Zakaria Dzagets 862 convened a council in Shirakavan from numerous bishops and monks in the presence of the sparapet of Armenia Ashot Bagratuni. During the council, a tense struggle was waged between adherents of the Armenian faith and supporters of Chalcedonianism. Bishop Vahan (John) of Nicea spoke at it, trying to persuade the Armenians to accept the Council of Chalcedon. However, the Armenian clergy managed to diplomatically reject the proposals of the Greek Church.

Photius continued his efforts in the second period of his patriarchate (877-886). He wrote a letter to the Prince of Princes Ashot and in various ways tried to convince the Armenian leadership to accept the Council of Chalcedon. In his answer, which was set forth by Sahak Apikuresh (Mrut), Ashot refutes the

accusations against the Armenian Church and, in turn, accuses the Council of Chalcedon for being similar to Nestorianism. The content of Ashot Bagratuni's answer demonstrates the unity of the Armenian spiritual and secular authorities in protecting the independence and independence of the national church. It is important that the Armenian nobility built their relations with Byzantium taking into account the interests of the Arab Caliphate, since the Arabs played a huge role in the region. By rejecting the proposals of the Greek Church, Armenia satisfied the age-old enemy of Byzantium, the Arab Caliphate. Having defended the independence and autonomy of their church, the Armenians fought for national identity, since religious identity was the basis of the national identity of the Armenians.

Резюме

## АРМЯНО-ВИЗАНТИЙСКОЕ ЦЕРКОВНОЕ ПРОТИВОСТОЯНИЕ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ 9-ГО ВЕКА

Вардан А. Алексанян

*Кандидат ист. наук*

**Ключевые слова** - Халкидонский собор, монофизитство, Закария I Дзагеци, Константинопольский патриарх Фотий, Ашот I Багратуни, Саак Апикуреш, церковная корреспонденция, Ширакаванский собор, церковный союз, Несторианство, Византийская церковь

Вторая половина IX века ознаменовала начало нового этапа противостояния Византийской и Армянской церквей. В начале 860-х годов началась переписка патриарха Константинопольского Фотия (858-867, 877-886) с католикосом Закарией I (855-876) и Князем князей Ашотом I (862-887). Основным предметом переписки являлось отношение к Халкидонскому собору и попытки создать армяно-византийское церковное единство. Это был вызов, брошенный не только Армянской церкви, но и всему армянскому народу, так как скрытая цель Константинопольского престола была создание почвы для окончательной аннексии Армении. С целью обсуждения предложения и принятия решений Фотия Закария Дзагеци 862 г. созвал собор в Ширакаване из многочисленных епископов и монахов, в присутствии спарাপета Армении Ашота Багратуни. В ходе собора велась напряженная борьба между поборниками армянской веры и сторонниками халкидонитства. На нем выступил представитель Фотия епископ Ваган (Иоанн) Никейский. Однако армянскому

духовенству удалось дипломатично отвергнуть предложения греческой церкви.

Фотий продолжал свои усилия и во втором периоде своего патриаршества (877-886). В этот раз адресатом его письма был Князь князей Ашот Багратуни. Разными способами он старался убедить армянское руководство принять халкидонский собор. В своем ответе, который изложил Саак Апикуреш (Мрут), Ашот опроверг обвинения в адрес Армянской церкви и, в свою очередь, обвинил Халкидонский собор в сходстве с несторианством. Содержание ответа Ашота Багратуни демонстрировало единство духовных и светских властей Армении в деле защиты самостоятельности и независимости национальной церкви.

Важно, что свои отношения к Византии армянская знать строила с учетом интересов Арабского халифата, так как арабы играли большую роль в регионе. Отвергнув предложения греческой церкви, Армения хотя и угодила требованиям Арабского халифата, но в тоже время защищала свои интересы.

Отстояв независимость и самостоятельность своей церкви, армяне боролись за религиозную самобытность, которая была основой национальной идентичности.

## REFERENCES

1. **Adonts' N.**, Bagratunyats' p'ark'ë, Erker, hat. A, Er., EPH hrat., 2006 (**In Armenian**).
2. **Adonts' N.**, Mamikonyan ishkhanuhin byuzandakan gahi vra, Erker, hat. A, Er., EPH hrat., 2006 (**In Armenian**).
3. **Adonts' N.**, Vard Mamikonyan (856-866), Erker, hat. A, Er., EPH hrat., 2006 (**In Armenian**).
4. **Adonts' N.**, Vasil A kayser tarik'n u tsagumë (867-886), "Erker", hat. E, Er., EPH hrat., 2012 (**In Armenian**).
5. **Adonts' N.**, Vasil hayazn, Erker, hat. A, Er., EPH hrat., 2006 (**In Armenian**).
6. **Akinean N.**, T'eodoros Apikura ev Nana Asori Hayastani mēj ev Nanayi Yovhannu meknut'ean hayerēn t'argmanut'iwnë, Matenagrakan hetazotut'iwnner, K'nnut'iwn ew bnagrēr, hat. A, Vienna, tp. Mkhit'arean, 1922 (**In Armenian**).
7. **Alek'sanyan V.**, Khach'ik A Arsharuni kat'oghikosi at'orakalut'yunë ev hay-byuzandakan ekeghets'akan hakamartut'yunë 10-rd dari verjin k'ařordin "Vēm" hamahaykakan handes, 2020, N 3 (**In Armenian**).
8. **Alishan Gh.**, Hushikk' hayreneats' Hayots', hat. A, Venetik, 1869 (**In Armenian**).
9. **Ananyan P.**, «Girk' t'ght'ots'»-i k'ani mē khndrakan harts'er, "Bazmavēp", 1985, N 3-4 (**In Armenian**).
10. **Ananyan P.**, P'ot patriark'i t'ght'akts'ut'yunë hayots' het, "Bazmavēp", 1988, N 1-4, 1989, N 1-4 (**In Armenian**).
11. **Ananyan P.**, P'ot patriark'in namakë Ashot ishkhanin, «Bazmavēp», 1990, N 1-2 (**In Armenian**).
12. **Ařak'elyan B.**, Ğarni, Er., izd. AN Armyanskoj SSR, 1951 (**In Russian**).

13. **Arutyunova-Fidanyan V.**, Polemika mezhdru xalkedonitami i monofizitami i pereziska patriarxa Fotiya, “Vestnik Pravoslavnogo Svyato-Tixonovskogo gumanitarnogo universiteta”, I, Bogoslovie, Filosofiya, M., 2010, Vip. 2 (**In Russian**).
14. **Bart'ikyan H.**, «Dashants' t'ught'ë». kazmë, steghtsman zhamanakë, heghinakn u nptakë. “Patmabanasirakan handes”, 2004, N 2 (**In Armenian**).
15. **Bart'ikyan H.**, Kostandnupolsi patriark' Nikoghayos Mistikosi 101-rd ev 139-rd t'ght'erë' ughghvats Hovhannes Draskhanakertts'un ev Smbat A tagavorin, «Patmabanasirakan handes», 1966, N 4 (**In Armenian**).
16. **Bart'ikyan H.**, «Narratio de rebus Armeniae» hunaren t'argmanut'yamb mez hasats mi hayk'aghkedonakan skzbnaghbyur, “Banber Matenadarani”, 1962, N 6 (**In Armenian**).
17. **Ch'amch'yan M.**, Hayots' patmut'yun, hat. B, Er., EPH hrat., 1984 (**In Armenian**).
18. “Girk' t'ght'ots'”, Matenagrutiwn nakhneats', T'iflis, D. Rotinyants' ev M. Sharadze hrat., 1901 (**In Armenian**).
19. Grigor Magistrosi t'ght'erë, bnagim arajabanov ev tsanöt'. luys ëntsayeats' **Kostaneants' K.**, Agheksandrapol, tp. Geork Machoeantsi, 1910 (**In Armenian**).
20. **Eghiazaryan A.**, Hay Bagratunineri terut'yunë (885-908), Er., EPH hrat., 2011 (**In Armenian**).
21. **Grigoryan G.**, Taroni Bagratunineri feodalakan ishkhanut'yunë IX-X darerum, Er., HSSH GA hrat., 1983 (**In Armenian**).
22. **Hakobyan V.**, Manr zhamanakagrut'yunner XIII-XVIII, hat. B, Er., HSSR GA hrat., 1956 (**In Armenian**).
23. **Hats'uni V.**, Karewor khndirner hay ekeghets'woy patmut'enën, Venetik, 1927 (**In Armenian**).
24. Havak'umn patmut'ean Vardanay vardapeti, Venetik, 1862 (**In Armenian**).
25. Hayots' patmut'yun, hat. B, Mijin darer (IV dar - XVII dari arajin kes), girk' B (IX dari kes - XVII dari arajin kes), Er., “Zangak” hrat., 2014 (**In Armenian**).
26. **Hovhannes Draskhanakertts'i**, Patmut'yun Hayots', Matenagirk' hayots', ZhE. hator, Zh. dar, Patmagrut'iwn, girk' A., Ant'iliias-Libanan, 2010 (**In Armenian**).
27. **Hovsep'yan G.**, Hishatakarank' dzeragrats', hat. A, Ant'iliias, tp. Kat'oghikosut'ean Kilikioy, 1951 (**In Armenian**).
28. **K'eoseyan H.**, Hay ekeghets'akan matenagrut'yun <http://gevorgianseminary.am/> (**In Armenian**).
29. **Kirakos Gandzakets'i**, Patmut'yun Hayots', ashkhat. K. Melik'-Ohanjanyani, Er., HSSR GA hrat., 1971 (**In Armenian**).
30. **Kogean S.**, Hayots' Ekeghets'in, Erusaghëm, 1963 (**In Armenian**).
31. “K'ristonya Hayastan” hanragitaran, Er., 2002 (**In Armenian**).
32. Otar aghbyurnerë Hayastani ev hayeri masin, hat. 6., Byuzandakan aghbyurner, hat. B., Kostandin Tsiranatsin, targm. bnagrits', araj. ev tsanot. H. Bart'ikyani., Er., HSSH GA hrat., 1970 (**In Armenian**).
33. Otar aghbyurnerë Hayastani ev hayeri masin, hat. 15. Byuzandakan aghbyurner, 5 T'eop'anesi sharunakogh, targm. bnagrits', araj. ev tsanot. H. Bart'ikyani, Er., HKhSH hrat., 1990 (**In Armenian**).
34. Pataskhani t'ght'oyn metsi Hayrapetin Kostandinupolsi P'otay ar' Ashot ishkhanats' ishkhan, «Handës amsöreay”, 1968, N 10-12 (**In Armenian**).
35. Pataskhani t'ght'oyn P'otay greal Sahakay Hayots' vardapeti hramanaw Ashotay ishkhanats' ishkhan Hayots', “Handës amsöreay», 1968, N 10-12 (**In Armenian**).

36. **Sebēos**, Patmutiwn i Herakln, ashkhat. Abgaryan G., Er., HSSH GA hrat., 1979 (**In Armenian**).
37. **Step'anos Taronets'i Asoghik**, Patmutiwn tiezerakan, "Matenagirk' hayots'", ZhE. hat., Zh. dar, Patmagrutiwn, Girk' B., Ant'iliias-Libanan, 2010 (**In Armenian**).
38. T'ught' P'otay patriark'i ar Zak'aria kat'ughikosi Hayots' Metsats', «Handēs amsōreay», 1968, N 1-3, N 4-6 (**In Armenian**).
39. T'ught' P'otay patriark'i ar Zak'aria kat'ughikos Hayots' Metsats', "Pravoslavnyj Palestinskij sbornik" t. XI, vip. 1, St. Peterburg, 1892 (**In Armenian**).
40. Vahanay Nikiay episkoposi bank', "Handēs amsōreay", 1968, N 7-9 (**In Armenian**).
41. **Mkhit'arean A.**, Patmut'iwn zhoghovots' Hayastaneayts' ekeghets'woy, Vagharshapat, tp. S. Ėjmiatsni, 1874 (**In Armenian**).
42. **Muradyan P.**, Hayots' dprut'yunē Kostandnupolsum (V-X darer), "Patmabanasirakan handes", 1998, N 1-2 (**In Armenian**).
43. **Ormanyan M.**, Azgapatum, hat. A, Ejmiatsin, 2001 (**In Armenian**).
44. **Palchean h. A.**, Patmut'iwn kat'oghikē vardapetut'ean i hays ev miut'ean nots'a, Vienna, tp. Mkhitarean, 1878 (**In Armenian**).
45. **Pogharean N.**, Mayr ts'uts'ak dzeragrats' Srbots' Hakobeants', hat. G, Erusaghēm, tp. Srbots' Hakobeants', 1968 (**In Armenian**).
46. **Rosseykin F.**, P'oti jank'erē Hay ekeghets'in miats'nelu K. Polsoy kam Hunakan ekeghets'un, "Ararat" 1917, N 9-12, 1918, N 1-3 (**In Armenian**).
47. **Tēr-Minaseants' E.**, Hayots' ekeghets'u haraberut'yunnerē asorwots' ekeghets'ineri het, Ėjmiatsin, 1908 (**In Armenian**).
48. **Vardanyan V.**, IX dari erkrord kesin petut'yun ev ekeghets'i haraberut'yunnerin arēnch'vogh khndimeri shurj, "Patmabanasirakan handes", 2003, N 2 (**In Armenian**).
49. **Yuzbashyan K.**, Armyanskie gosudarstva epoxi Bagratidov i Vizantiya IX-XI vv., M., izdatelstvo "Nauka", 1988 (**In Russian**).
50. **Yuzbashyan K.**, «Bagratunyats' shrjani» Hayastanē' mijjagayin iravunk'i tesankyunits' "Patmabanasirakan handes", 1975, N 1 (**In Armenian**).
51. **Ėstkarean V.**, Ekeghets'akan patmut'iwn, Vienna, tp. Mkhitareants', 1872 (**In Armenian**).